



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

W. 2





Офисъ града
штату архитектору
міського
будинку
19 АВГ 2005

СОСУДОВІ ФІРМЫ УКРАЇНСЬКИХ СІЄВЕСІВ

1910

жовт.

Баку-Зангезур

ՊԵՏՐՈՎԻՆ ՔԱՂԻՄԾՆԵՐ

(Վրաստան Համբաւ օպերարերից)

Առաջին կրկնորդ

Դաւիթ և Դանիէլ կաթողիկոսներ.

Կ Ա Զ Մ Ե Ց

Եղիշե տ. ք. Գևորգիանց

Исторические выписки

(Перепечатано из журнала "Овилъ" (Пастыры)

Католикосы Давидъ и Даніилъ.

Ч. II. Сост. прот. Е. Гегамянцъ.


ԳՐԱՎԵ ՅՈՒՂ

263

БАКУ

Типографія Н. А. Эриванцова.

1909.



05 SEP 2011

9(47, 995)

9-42

wy -

Սոյն պրակի աղբիւրներն են՝ բացի առաջին պրակում յիշւածներից նաև

1) Աղանեանց. Դիւան Հայոց Պատմութեան, գիլք եւ և Զ.

2) Акты Кавказ. Археогр.
Комиссии, *штапънър* II, III и IV.

3) Պէտքերեան. Պատմութիւն Հայոց 1772—1860. Կ. Պօլիս, 1871.



լԲ.

Ուստ կառավարութիւնը մանրամասն, և
բաւականին ձիշտ, տեղեկութիւն ունէր թէ Արա-
րատեան Մայր Աթոռը ինչ նշանակութիւն և
խորհուրդ ունի ընդհանուր հայութեան համար։
—Դիտէր թէ նոյն իսկ տիրապետող պարսիկ
տարրը, մինչև իսկ պարսից ինքնակաները, որ-
պիսի յարգանքով և ակնածութեամբ են վերա-
բերում դէպի այդ դարաւոր սրբավայրն ու
նրա գահակաները։

Հետեաբար այդ սրբավայրին ու նրա գա-
հակալին իրան հպատակեցնելը՝ ոստ կառավա-
րութեան համար՝ մի քաղաքական կարևոր ան-
հրաժեշտութիւն էր։

Դրա համար էլ Յովսէփի մահւամբ կառա-
վարութիւնը չփատեցաւ, այլ անսայթաքօրէն շա-
րունակեց իւր ջանքը, որ էր՝ Մայր Աթոռի վրայ
մի այնպիսի կաթողիկոս նստեցնել, որ համա-
պատասխան լինի իւր քաղաքական հաշիւներին,
որ եթէ Յովսէփ Արդութեանի մեծամեծ արժա-
նիքներն չունենայ՝ գոնէ նրա ուղղութեանը հա-
մակրող և հետևող լինի, — զիտակցաբար թէ ան-
գիտակցաբար դա միենոյն է։

ՂՊ.

Մի այդպիսի անձի նմանողութիւն ունէր Դաւիթ Եպիսկոպոսը, —որ Դանիէլի և Յովաչփի ընտրութեան թերթերն մի տարի առաջ Պօլիս էր տարել և այնտեղի հայերից ևս վերընտրւած ու հաստատւած Դանիէլ կաթողիկոսի անունը՝ Ինքը առաջնն էր յիշատակել Պօլսոյ Մայր Եկեղեցումը:

Հոգաս կաթողիկոսի մահից մի ամիս առաջ՝ Դաւիթը մի մասնաւոր նամակով, —գրւած էջմիածնից 1799 թւի նոյեմբերի 27-ին, —Յովաչփի Արզութեանին հարցնում էր թէ նա յօժարնում է արդեօք կաթողիկոս դառնալ, որպէս զի ինքը այժմեանից «Ճատագով» լինի և նրա թեկնածութիւնը առաջ մղէ: —Յովաչփը, իհարկէ, յօժար էր:

Բայց որովհետեւ նրա թեկնածութիւնը առաջն անգամ էջմիածնում, ինչպէս զիտենք, չ'անցկացաւ:

Երկրորդ ընտրութիւնն էր, որ «'ի բոնաւորութէնէ բոնաւորաց», էր կատարւել ս. էջմիածնում, —Պօլսոյ հայերի կողմիցը խոտեցաւ. —ուստի Դաւիթը, կամայ թէ ականայ, համակերպել էր աղքի ընտրութեանը և խոնարհւել Դանիէլի առաջ:

Իսկ հիմայ, երբ Յովաչփը այլևս չկար, ընական է, որ ոսւս քաղաքականութեան համար բացարձակ հաշիւ էր՝ հանգուցեալին յառդ տեսնել նրա մտերմին, նրան համակրողին:

Ի պատիւ Դաւիթին, սակայն, պէտք է ասել, որ նա թէպէտ և ոսւս կառավարութեան սոյն այս տրամադրութեան ծանօթ էր, —այնու ամենայնիւ՝ Յովաչփի մահւան լուրն առնելով՝ իսկոյն միացաւ էջմիածնի միաբանութեան հետ և նրանց ու «Երկրացւովք» (աշխարհականներով) Դանիէլի համար ընտրական թերթ կազմեցին և ուղարկեցին Թօխատ՝ հրաւիրելով նրան էջմիածնի իրու արդէն ընտրեալ կաթողիկոս:

Եւ եթէ կողմանակի ազգեցութիւնը նորից հրապարակ չգար, —Դանիէլը կուգար և կստանձնէր իւր պաշտօնը: Եւ ամէն ինչ խաղաղութեամբ կը վերջանար:

Դժբաղդաբար քաղաքականութիւնը դարձեալ իւր պոչը ժաժ տւեց:

Եւ ահա այդ օրւանից սկիզբն առաւ, այսպէս անւանեալ «Դաւիթ-Դանիէլեան» շփոթները ու կոփաները էջմիածնի միաբանութեան և հայ ազգի մէջ ամեն տեղ:

Մեզանում շատերը կարծել են և հիմայ էլ կարծում են թէ՝ «Դաւիթ-Դանիէլեան» կոփւր արդիւնք է այս երկու եպիսկոպոսների լոկ փառասիրութեանը, նրանց կրքերին:

Սակայն, ինչպէս մեր ընթերցողները հետզհետէ կը տեսնեն մեր քաղաքածներիցը, «Դաւիթ-Դանիէլեան» կոփւր իսկապէս արդիւնք է ոռւսական, տաճկական և պարսկական քաղաքականութեան մըցակցութեանը, նրանց, նաև մանաւանդ առաջինի, աշխարհակալական ձգտումներին:

լ.թ.

Պատերազմական նախնթաց գործողութիւններն, կաշառակուրծ պաշտօնեաների յափշտակութիւններն և շահագործողների հարստահարութիւններն Մայր Աթոռի նիւթական վիճակը տակն ու վրայ էին արել:

Միաբանութիւնը այն աստիճանի աղքատութեան էր հասել, որ կենսական ամենահրաժեշտ պիտոյքներիցն անդամ զրկւած էր:

Այս ամենը Յովսէփ Արդութեանին քաջ յայտնի էին:

Ուստի նա, Ռուսաստանից մեկնելուցը առաջ՝ պահանջեց հաղորդել իրան, թէ վանքը ինչ ու ինչ պակասութիւններ ունի՝ խոստանալով հոգալու այդ ամենը:

Հարուստ, փարթամ և առատաձեռն Արդութեանի համար՝ ոչ մի նշանակութիւն կամ ծանրութիւն չէր Մայր Աթոռին օգնութեան հասնելն:

Թող որ այդ օգնութիւնից՝ նորընտիր կաթողիկոս՝ ինքը աւելի կօգտւէր: Դրանով նախ և առաջ՝ միաբանութեան սիրաը կգրաւէր. իսկ երկրորդ՝ փոքր ի շատէ վայելուչ շուք կուտար այն Աթոռին, որի վրայ իւր «Ճքեղափառ» անձն էր բազմելու շուտով:

Արդութեանի պահանջին միաբանութիւնը փութաց պատասխանել, որ վառելու մոմի ճրագու չունին, հագուստ չունին, ոսպ, սիսեռ, բակայ և շիրտախտ չունին:

Կաթողիկոսը, ի հարկէ, կարգադրեց, որ այդ ամենը Թիֆլիզից հասցնեն վանքին: Իսկ երբ ինքը կովկաս մեկնեց՝ բեռներով հետը բերում էր մեծ մեծ ընծաներ, մթերք, վանքի և վանականների համար զգեստացուներ և այլ անհրաժեշտ, նոյն իսկ թանգագին, առարկաններ:

Բայց ինչպէս որ Արդութեանին իրան չէր վիճակւած էջմիածնի երեսը տեսնել, այնպէս էլ նրա բերած ընծաներին չվիճակւեցաւ էջմիածնին հասնել, բացի մի քանի աննշան եկեղեցական իրերից:

Լ.թ.

Թէպէտ կաթողիկոսի համար, իւր իսկ յանձնարարութեամբ, բնակարան էր պատրաստած Թիֆլիզի մայր եկեղեցւոյ, — վանքի գաւթում, սակայն Արդութեանը իւր եղբօր որդի իշխան Սողոմոն Արդութեանի տանը իջևանեցաւ:

Եւ հէնց որ կաթողիկոսը հոգին աւանդեց, իշխան Սողոմոնը հանգուցելոյ սպասաւոր Գրիգոր փարթապետի հետ միասին՝ գրեթէ բոլոր կաթողիկոսական կայքն ու գոյքը յափշտակեցին, իրանց սեպհականնեցրին:

Նրանք մինչե անգամ թոյլ չտւին, որ էջմիածնից կաթողիկոսին հրաւիրակ եկած 4 արքեպիսկոպոսները՝ դիակին մօտենան, աղօթեն, «հոգւոց» ասեն:

Դիակը գագաղում դրած՝ նրանք մի ամսաշալ պահեցին մինչե որ թաղման տեղը որոշել կայսերական հրամանաւ:

Գրիգոր վարդապետի և իշխան Սողոմոն Արդութեանի արարմունքի թելադրողը՝ եթէ ժեներալ Լազարեվը չէր՝ անշուշտ նրանց համակրողն էր։

Որովհետեւ ժեներալ Լազարեվը էլ, իւր հերթում, հրաւիրակ եկած արքեպիսկոպոսներին արգելեց էջմիածին վերադառնալու, երկիւղ կը բերելով մի գուցէ նրանք այստեղ դառնալով՝ փոխանակ Դաւթի՛ Դանիէլի ընտրութիւնը առաջ ձգել տան միաբանութեանը։

Իր միջամտութիւնը այս գործում ոռուսական իշխանութեան ներկայացուցիչ Լազարեվը նրանով էր բացատրում, իբր թէ հանգուցեալ կաթողիկոսը՝ իւր խոստովանահօրը բանաւորապէս կտակել է, որ իրան յաջորդը Դաւթի՛ արքեպիսկոպոսը լինի, և սա, իւր հերթում, Գրիգոր վարդապետին եպիսկոպոսացնելով՝ ոռուսահայերի վրայ առաջնորդ կարգէ։

Հնայած այս հնարովի պատճառաբանութեանը, չնայած ժեներալ Լազարեվի արգելքներին և Գրիգոր վարդապետի ու իշխան Սողոմոնի ինտրիգներին՝ հրաւիրակ արքեպիսկոպոսները՝ իւր ժամանակին և ամեն բան հազորդեցին ու հասկացրին Մայր Աթոռի միաբանութեանը։

Վերջինս էլ աճապարեց և միաբանութեան և աշխարհականների միջոցաւ մարտի 17-ին մի ժողով կազմեց, որը մի տարի առաջ եղած Դա-

նիէլի ընտրութիւնը՝ վերընտրութեամբ հաստատելով ուղարկեց նորան Թօխաթ՝ թախանձելով, որ, կարելիին փութով, ճանապարհ ընկնի էջմիածին գալու։ Ինչպէս յիշել ենք՝ այդ ժողովին մասնակցեց և թերթին ստորագրեց Դաւթի՛ արքեպիսկոպոսն ևս։

Ժողովի որոշումը լսելով ժեներալ Լազարեվը դիմեց նախընթաց տարում իւր գործադրած բռնի միջոցին։

Թիֆլիզի մի քանի ազգեցիկ հայերից և վըրաց արքայորդի Դաւթից նա, Լազարեվը, մի պատգամաւորութիւն ուղարկեց դարձեալ էջմիածին՝ պահանջելով որ կարողիկոս բներուի անպատճառ Դաւիրը, այլ ոչ Դանիէլը*։

Այդ պատգամաւորութեամբ էլ չբաւականալով ժեներալ Լազարեվը Երևանի պարսից խանին ևս մի նամակով ինսդրեց ազգելու էջմիածնեցւոց վրայ, որտէս զի սրանը Դաւթին ձայն տան։

Դրանով էլ չբաւականանալով ժեներալ Լազարեվը Երևանի խանին վրայ ճնշում գործե-

* Վերջերսում երբ Դանիէլը կաթողիկոսացաւ՝ վրաց արքայորդի Դաւիթը նրան զրած չնորհաւորական նամակում իւր էջմիածին գալին և Դանիէլի կաթողիկոսացման հակառակ գործելն ակնապիկելով աւելացնում է ան ըստ ամենայնի անմեղ ևմ առայն, զի սատ (Թիֆլիզում) եղեալ մեծաւորն առւսաց (Լազարեվ ժեներալն) զր ինչ և ասեր ես անցանել ՚ի բանէն նորա ոչ կարէի» (Դիւան չ, պատմ, գիրք ե, եր, 262)։

Միենայն միտքը և փաստալից կերպով՝ արքայորդի Դաւթը յայտնում է նաև Եփրեմ արքեպիսկոպոսին ուղղած նամակումը (Նոյնը, եր, 342—343)։

լու նպատակաւ, մի գունդ էլ զօրք ուղարկեց ոռւսաց և պարսից սահմանագլխի վրայ սպասելու...

19.

Տեսնելով ոռւս իշխանութեան այս աստիճանի ջերմ պաշտպանութիւնը՝ Դաւիթ արքեպիսկոպոսը, որ ցարդ օրինակութիւնից դուրս չէր եկել, գայթակղւեց:

Եւ իւր կողմից ևս աշխատեց խանին որսալու:

Խանն էլ տեսնելով, որ ոռւս իշխանութեանը դիմադրելու ոյժ չունի՝ կամեցաւ լաւամարդի երևալ թէ Լազարեվի առաջ և թէ Դաւիթի, որի առաջարկած կաշտոքն ևս ուրախութեամբ ընդունելով իւր զօրքերը էջմիածին ուղարկեց և նրանց սւինների երկիւղի տակ՝ նարին բռնութեամբ կարողիկոս օծել տեղ ի հաճոյս ուսական կառավարութեան:

Օժմանը մասնակցել պարտաւորւող հոգևորականներից գլխաւորները՝ փախչում, թագչում էին: Բայց պարսիկ զինուորները նրանց գտնելով բռնութեամբ վանք էին բերում:

Այս կերպով ի գլուխ եկած իրականութեան հետ, բնական է, բողոքողները չէին կարող հաշտիլ և շարունակում էին իրանց արդարդատի պաշտպանութիւնը:

Առանձնանալով եկեղեցւոյ մէջ՝ նրանք իջման տեղի և ս. Գեղարդի վրայ երդւեցան՝

չճանաչել Դաւիթին կաթողիկոս: Եւ նրա տապալմանը համար ձեռքներիցը եկած աշխատանքը չխնայել:

Հէնց այդ նպատակի համար էլ՝ նրանցից մինը, — Յովհաննէս գեղարդակիրը ծածուկ թիֆլոս փախաւ, որպէս զի այնտեղ հոգայ «վասն ազատութեան սրբոյ տանս և միաբանութեանս մերոյ»:

Զատկի մեռելոցի օրը՝ Դաւիթի ականջն հասնելով Գեղարդակրի փախուստը՝ իսկոյն բռնեց նրա գլխաւոր կողմանակիցներին և շղթայակապ բանտարկեց էջմիածնում: Իսկ միւսներին գիշերը գանակոծելու համար՝ հրամայեց ձիւպոններ պատրաստել:

Ողջ միաբանութիւնը ոտքի կանգնեց և քարերով ու փայտերով վեհարան դիմելով՝ «հանաք զեղբարսն մեր ի բանտից և ի կապանաց»:

Յետոյ խուռն բազմութեամբ գնացին «յեկեղեցին եպիսկոպոսք, վարդապետք, արեղայք և սարկաւագունք և բոլոր ուխտ եկեղեցւոյ և քննութիւն արարեալ գտաք զսա ընդդէմ Աստուածային և եկեղեցական օրինաց, խանգարիչ բարեկարգութեան Ազգին և աւերիչ որբոյ Աթոռոյս»:

«Վասն որոյ ուխտեցաք առաջի Քրիստոսական սուրբ տեղւոյս, զի բարձցուք դշարն ի միջոյ: Եւ ի հաստատութիւն բանիս՝ գրեցաք զիր մի առ ինքն Դաւիթ թէ՝ վասն զանազան անկարգութեանց և բարբառոսական գործոց

քոց՝ ոչ լնդունեմք զքեզ. և միանգամայն նը-
զովեցաք զինքն և զհամախոհս նորա»:
լէ.

Տեսնելով միաբանութեան այս աստիճան
լարւած գրութիւնը՝ Դաւիթը հրամայեց բոլոր
գոները պինդ փակել, որպէս զի ոչ ոք չկարո-
ղանայ դուրս գնաւլ վանրից:

Մակայն միաբանութիւնը պարսպի հիւսի-
սային պատը քանդելով դուրս ելաւ և խուռն
բազմութեամբ՝ «Եսլիսկոպոսունք, վարդապետք,
արեղայք, սարկաւագունք և մանկունք վարժա-
տանն և բոլոր միաբանք» դիմեցին երեանի
խանին և պահանջեցին կամ Դաւթին հեռացնել
և բերել «զօրինաւոր Հայրապետն (զԴանիէլն) և
կամ սպանել զմեզ զամենեսեան»:

Խանը սկզբում տրամադիր էր զիջանել:
Գուցէ նոյն իսկ նրա որտովն էր միաբանու-
թեան այդ խոշոր ցոյցը: Զիջանելով միաբանու-
թեանը և փոխելով Դաւթին՝ խանը, որոշ չա-
փով, յաղթանակ տարած կլինէր ոռւսաց քաղա-
քականութեան վրայ, բայց յետոյ՝ «չնչաւատ
մելիքն (Դաւթի խնամի մելիք Աբրահամը) ի
ձեռս մեծագումար կաշառաց շրջեաց զմիտո
նորա, որ ժխտեաց զխոստումն իւր»:

Բացի կաշառքից, թերեւս, խանը չկամեցաւ
ոռւսներին նորից գրգռել իւր դէմ:

Այսպէս թէ այնպէս, ցոյցի հետևանքը ցու-
ցարաների համար լաւ չեղաւ:

Խանը բռնեց ցոյցի պարագլուխ Աստուա-

ծատուր, Բարսեղ և Աւետիս եպիսկոպոսներին
և շղթայելով բանալ ձգեց, որից ազատուիլ կա-
րող կինին 9000 դուռուշ տուգանք վճարելուց
յետոյ:

Իսկ միւս ցուցարարներին՝ անխտիր ամեն-
քին, նոյն իսկ վարժատան մանուկներին, ձիա-
ւոր զինւորները քշեցին տարան էջմիածին.
Ճանապարհին «գանելով, հարկանելով»:

Ժամանակը գիշեր էր, մութ. ցուցարարնե-
րը գնում էին բոկոտն, շատերը գլխաբաց:—Եր-
կնքից թեթև անձրև էր գալիս: Ճանապարհը
ցեխոտած էր. արագ շարժւել չէին կարողա-
նում, մինչդեռ զինւորները անդադար սախառում
էին՝ նոյն իսկ ծեծում: Ուստի շատերը փոսե-
րի մէջն էին գլորւում, ընկնում, շատերի մար-
մոյ այս և այն մասն էր վիրաւորւում:—Եւ
այսպէս տուայտանօք և տառապանօք հասուցին
(զինւորքն) զմեզ ի ո. Աթոռն»:

Եւ իսկոյն փակեցին լցերի մէջ գոները
վրաներիցը փակելով մինչև ի լոյս: Լուսաբացին
էր, չնայած կալանաւորների աղաչանքներին ու
աղաղակներին, գոները չէին բաց անում: Այն-
պէս որ ստիպւած եղան ընական կարիքը կա-
տարել խմելիքի և ուտելիքի համար յատկաց-
րած ամանների մէջ*):

Կէս օրւայ դէմ վերջապէս կալանաւորնե-

*) Եթէ Դաւթին հաւատանք՝ երեանից յետ դարձրած այս
միաբաններին նա ինքը իրեւ թէ «խնամարկութեամբ ընկալաք և
ներեցաք ամէնից յանցանքն առ, և այժմ ունիմք զամենեքեան ՚ի
մէր»: Դիւան զիրք Զ. եր. 395.

ըին արձակեցին, իւրաքանչիւրիցը այսպիսի ստորագրութիւն առնելով, որ ով որ վանքից փախչի, կամ կաթողիկոսին ընդդիմանայ, — պարտաւոր է 100 թուման տուգանք վճարել և մօրուքը գերծել տալ:

Յետոյ պարագլուխներին նորից տարան և առանձին առանձին բանտարկեցին գարւոյ, ցուրենի և այլ մթերքների ամըարներում:

Եւ ինչպէս այդ բանտերի վրայ՝ նոյնպէս և վանքի գոների և ճանապարհների վրայ՝ պահապան զինւորներ կանգնեցրին, որպէս զի կալանաւորները ոչ փախչիլ կարողանան և ոչ էլ նամակ ուղարկել մի տեղ*):

Ա.՝

Ինչ եռանգով որ ժեներալ Լազարեվը Դաւթի ընտրութիւնն ու օծումը յաջողեցրեց, նոյն եռանգովը Տամարա գեսապանը՝ Կ. Պոլսոյ հայերի յօժարութիւնն ու սուլթանական հաստատութեան ֆէրմանը ձեռք բերեց Դաւթի համար:

Սուլթանի ֆէրմանին հետևեցաւ և պարսկական Շահի հրովարտակը:

Սակայն այդ ամենը արգելք չդարձաւ Դանիէլի կուսակիցներին իրանց բողոքի ձայնը հասցնելու ամեն տեղ, մինչև իսկ Պետերբուրգի արքունիքին, որի Պոլսոյ և Վրաստանի ներկայացուցիչները այս աստիճան բոնանում էին հայ ազգի և նրա գարաւոր իրաւունքների վրայ:

*). Դիւան գիրք Ե. Կ. 225—226.

Բողոքում էր էջմիածնի միաբանութեան մեծագոյն և ընտիր մասը, որ ցարդ հաւատարիմ էր մատցել Մայր Աթոռի շահերին, բողոքում էր ինքը Դանիէլը, բողոքում էր և հայ

(ժողովուրդը*):

Իսկ այդ ամեն բողոքողների պարագլուխ կանգնած էին Եփրեմ արքեպիսկոպոսը (յետոյ կաթողէկոս) և Լազարեան իշխանական տունը, որը կատարինէ կայսրուհու օրերիցն սկսած՝ մեծ կշիռ էր ստացել ուսւ կառավարութեան աշխում:

Այդ բողոքները ունեցան իրանց ազգեցութիւնը:

Աղէքանդը Ա. կայսրը 1801 թւականի սեպտեմբեր 26 թւակիր հրովարտակով հրամա-

*) Դաւթի կուսակիցներն ևս, իրանց հերթում, բողոքում էին Գևառերուրգի արքունիքին Դանիէլի և նրա կուսակիցների գէմ (Դիւան Հ. պատմ. գիրք Ե. Կ. 313—317. ևս և գիրք Զ. Կ. 413—417):

Բողոքում էր ինքը Դաւթը ուղակի կարսեր և ինդուստր գնութեամբ հասու լինել անցիցն անցելոց և մի մի կողման ունելով՝ զմիւն կողմն պարտաւորել (նոյնը. գիրք Ե. Կ. 163—166):

Նա, Դաւթը բողոքում էր կայսրուհի Մարիա Ֆեոդորովնային և նրա միջնորդութիւնը խնդրում կայսեր տռաջ. (նոյնը. գիրք Զ. Կ. 511—513):

Դաւթը դիմեց նաև ժեներալ պրօկուրօր Ալէքսանդր Անդրէյսիշ Բերլեշովին, զիմեց կայսեր անձնական քարտուղարին, ևս և զանազան մեծահամբաւ և ազդեցիկ պաշտօնական և անպաշտօն աձնքներին (նոյնը. գիրք Զ. Կ. 518—526):

Սակայն երբ նրա և նրա կուսակիցների այդ ամեն տեսակ գրաւոր զիմումները ցանկալի արդիւնք չունեցան, — Դաւթը երկու հայինկապս ուղարկեց Պետերբուրգ, սակայն դրանց էլ չթոյլատրեցաւ կովկասից այն կողմն անցկենալ:

յեց Տամարային, որ Դաւթի Փէրմանը առ ոչինչ համարել տալով՝ Սույրանից Առ Փէրման ձեռք թէրէ Դանիէլի հաւտաւման համար:

Նոյնպիսի հրահանգներ ուղարկւեցաւ Վրաստանի իշխանաւորներին էլ, որպէս զի նրանք էլ այս կողմերում ազիտացիա անեն յօդուա Դանիէլի կաթողիկոսութեան:

Այդ ազիտացիայի հետևանքներից մինն էլ այն ինսդիրն է, որ Թիֆլիզի հայ հասարակութիւնը՝ իշխանները և արհեստաւորները, — «միահամուռ բազմութեամբ» ուղարկել են կայսեր:

Խնդրատուները գրում են կայսեր, որ Ս. Էջմիածնում օծւած Դաւթին նրանք ճանաչել են և ճանաչում են իրանց կաթողիկոս:

Եւ որքան կենդանի է՝ նա է ընդհանրական կարողիկոս մեր, և ոյ ոյ կարէ փոփոխել զնա, որովհետեւ օծեալ Տեառն է, նա պարտի յիշտակել ի սուրբ եկեղեցիս մեր, և բաց ի նմանէ ոյ ոյ ճանաշեմի և զիտեմի:

Իսկ երեք (շարունակում են խնդրատուները) Նորին կայսերական Մեծութեան հրամանն զայցէ և Նորին Բարձր հրամանաւ այլ ոյ եկեսցէ և օծցի ի մեջ սրբոյ Սրոռոյն՝ յամժամ անենեցնեանս պարտական եմի հնագանդիլ Նորին կայսերական Մեծութեան հրամանին^{*)}:

Դիպլոմատի ձեռքով և դիպլոմատիքական լեզուվ գրուած այս ինսդիրը, որին 304 հոգի էին ստորագրել, նրանց թւում և հոգեորական-

^{*)} Դիւան գիրք Ե. Կ. 251.

ներ, մատուցուեցաւ» Նորին Բարձր գերազանցութեան Կարլ Ֆեոդորովիչ Կրօնինգին, և հաճախ ընկալաւ, որ ն բարգմանեալ ընթեցաւ և խոսացաւ առաքել ի Դուռն Ամենաղործած և ինքնակալ Մեծի Կայսերն»:

Լթ.

Այս բողոքագրերն ու խնդրագիրները ստանալով Աղեքսանդր կայսրը 1802 թուականի մայիսին տւած հրովարտակով հաստատեց Դանիէլի կաթողիկոսութիւնը՝ ընծայ ուղարկելով, միևնույն ժամանակ, բաւականաչափ շուրջառացու կտորներ կաթողիկոսին իրան և վանքի համար:

Եւ որովհետեւ Դաւթիթը արդէն օծւած էր և գահակալում էր, ուստի Դանիէլը, Եփրեմ արքեպիսկոպոսի խորհրդով, որ թերևս ներշնչւած էր ուրիշներից, Ալաշկերտի երեք խորան և. Յովհաննէս վանքում մայիսի 25-ին նոյն 1802 թ. օծւեցաւ կաթողիկոս Աղեքսամարի Կարապետ կաթողիկոսի, 16 եպիսկոպոսների և բազմաթիւ վարդապետների ու քահանաների միջոցաւ, ուրնք և գրաւորապէս բանաղբեցին Դաւթին կամենալով այս եղանակով ջլատելու ու խորտակելու նրա ոյժը^{*)}):

Սակայն Դաւթի ոյժը ոչ այնքան բարոյական էր, որքան նիւթական:

Դաւթիթը տեսնելով, որ ոռւս կառավարու-

^{*)} Այդ հետաքրքիր և ընդարձակ դօկումենտները տես Դիւան գիրք Ե. Կ. 219—236.

թիւնը իրան դաւաճանեց, —ինքն էլ հիմի պարսից կողմն անցաւ բոլորովին և պարսից քաղաքականութեան կուսակից գառնալով և իւր յոյսը պարսից վրայ գնիով ինքն էլ, իւր հերթում, էջմիածնում մի ժողով կազմեց և Գանիէլի կաթողիկոսութիւնը բանադրեց, էջմիածնից դուրս կատարւած նրա օծումը՝ համարելով հակառակ եկեղեցական և ազգային կանոնի։ Եւ այս կէտում, —պէտք է ասած, —Դաւիթը կատարեալ իրաւունք ունէր։

Դեռ այդ բաւական չէ։

Տաճկաց և պարսից իշխանութիւնների միջոցաւ՝ Դաւիթը Գանիէլին էջմիածնին բերել տւեց և բանադրեց ու բանադրկեց^{*)}։

Խ.

Երբեմն Դաւթին պաշտպանելով և կաթողիկոսացնելով և երբեմն Գանիէլին՝ ոռւս կառավարութիւնը, —շատ պարզ է, որ հայ ազգի և

^{*)} Կարնոյ հայ իշխաններին, Կ. Պօլոյ պատրիարքին և ամիրաններին, Թիֆլիսի և Թաթրիզի հասակակութիւններին զրած իւր կողակներում և նամակներում (տես «Դիւան Հայոց պատմ. զիրք Զ. երեսներ 629, 634, 672—674, 689 և 702—712) Դաւիթը զրում է, որ ինքը Դանիէլին պատով և յարգանքով է պահում վանքում, եկեղեցում էլ նրա համար յատուկ և պատւառը տեղ է պատրաստել տուած և այն։

Դաւթի ար գրածներն մեղ ճշմարիտ են թւում, մանաւանդ երբ ՚ի նկատ առնենք, որ Դանիէլը Դաւթին տւած, —անշուշտ սրա պահանջմամբ, —«համարագրով» (տես «Դիւան Հ. պատմ. զիրք Ե. եր. 297). բոլորովին ձեռք էր քաշել կաթողիկոսութիւնից: Թէպէտի միւս կողմից նրա այդ հրաժարագրիքը, ինչպէս և նրանով արտայայտած իւր խոստումն ու երգումը արգելք չեղան, որ նա, Դանիէլը միւս անզամ կաթողիկոս դաւնայ՝ երբ ոռւսական և պարսկական քաղաքականութիւնը պահանջեցին այդ:

Կրա Մայր Աթոռի շահերն չունէր ի նկատի, ոչ էլ այդ եպիսկոպոսների անձնական արժանիքը: Այլ միմիայն այն ազգեցութիւնը, որ նրանցից մէկը կամ միւսը կարող էր դործ դնել հայ ժողովրդի վրայ, և մինչև իսկ պարսից իշխանաւորների վրայ, յօգուտ ոռւսաց քաղաքական մերձաւոր և հեռաւոր շահերին։

Ուստի Գանիէլի հաստատութեան հրովարտակը ոտանալուց յետոյ՝ կառավարչապետ Կոռինգը գեսպան ուղարկեց Երևանի խանին՝ առաջարկելով, որ փոխանակ Դաւթին՝ Գանիէլին նստացնէ կաթողիկոս: Խանը բացասեց: Կոռինգը իւր առաջարկը կրկնեց: Խանը դարձեալ բացասեց:

Պարսից կառավարութեան համար հիմայ ամեն բան ափաշկարայ էր: Եւ նա շատ լաւ հասկանում էր, թէ հայոց երբեմն այս և երբեմն այն եպիսկոպոսին հովանաւորելով՝ ինչ քաղաքական ձգտութիւնը է տածում իւր մէջ ոռւս կառավարութիւնը:

Ուստի Պարսկաստանը բացարձակաբար ընդդիմադրել սկսեց ոռւսաց ձգտութիւններին:

Այդ միջոցին էր, որ Կոռինգին յաջորդեց իշխան Յիշիանովը, ազգաւ վրացի: Խ.

Այս նոր կառավարչապետին առնենջով տւած իւր հրահանգ՝ հրովարտակութիւնը^{*)} կայսրը, ի մի-

^{*)} АКТЫ, հատուր Ա, Երևան, 1922 թ.

Ջի ալոց, պատիրում է, որպէս զի նա,—Յիշիանովը, օգուտ քաղէ Դանիէլից և նրա բազմաթիւ կուսակիցներից պարսից և մասնաւորապէս Դանձակի խանի վրայ ազդելու համար:

Միենոյն հրովարտակումը՝ կայսը պատմելով Յիշիանովին թէ՝ ինչ պարագաներում ուռւ արքունիքը հաստատեց Դանիէլին կաթողիկոս և տաճկաց Սուլթանին ևս հաստատել տեղ,—աւելացնում է, որ եթէ նոր կառավարիչը դառ, որ սուսական շահերի տեսակէտով գուցէ Դաւթի կաթողիկոսութիւնը աւելի ձեռնատու է, քան Դանիէլինը,—թող ապա նա, կառավարչապետը, այդ մասին առանձին զեկուցակիր ներկայացնէ ի հեռաւորն անօրէնութիւն կայսեր իրան:

Ինչպէս ընթերցողին յայտնի է, Դանիէլը կայսեր կողմից հաստատեցաւ 1802 թւականի մայիս ամսին:

Իսկ Յիշիանովին վերոյիշեալ հրահանգը ուղարկեցաւ նոյն կայսեր կողմից նոյն 1802 թւականի սեպտեմբեր ամսին, ուրեմն երեք միտ յետոյ:

Եւ եթէ իշխան Յիշիանովը տեսնէր, որ սուսաց շեհերի տեսակէտից՝ Դաւթի կաթողիկոսացումը աւելի ձեռնատու է քան Դանիէլինը, անշուշտ Դանիէլը երրորդ անգամ կտապալւէր: Եւ տապալողը նոյն սուս կառավարութիւնը կլինէր:

Թէպէտ և այդ թշւառ եպիսկոպոսի այժմեան գրութիւնը,—բանտարկութիւնը էջմիածնում, —տապալւելուց պակաս վատ գրութիւն չէր:

ԽԲ.

Դանիէլի բաղդից իշխան Յիշիանովը՝ Յովսէփ Արդութեանի անձնապէս հակառակորդ վնելով*) Դանիէլին էր նախապատւութիւն տակում միշտ գեռ Պետերբուրգից չմեկնած: Բացի դրանից նա ինքն էլ ստուգեց որ, յիրաւի, հայ ազգի մեծամասնութիւնը ևս Դանիէլի կուսակից է:

Ուստի և հետեւեալ զեկուցագիրը ուղարկեց կայսեր «ի կատարումն Զերդ կայսերական Մեծութեան հրամանին՝ այստեղ հասած օրիցս ի վեր ոչ մի առիթ բաց չեմ թողել երևան հանելով՝ Դաւթիթ և Դանիէլ կաթողիկոսների մէջ ծագած հակառակութեան առթիւ՝ հայ ազգի իսկական ցանկութիւնը, որից օգտւելով մենի՛ կարողանանի հարկաւոր ներգործութիւնն ունենալ Պարսկասանի գործերութեան**),

Ապա պատմելով, որ ըստ իւր ժողոված ստոյդ տեղեկութիւնների, հայ ազգի ցանկութիւնը Դանիէլի կողմն է, աւելացնում է, որ ինքը գեռ Թիֆլիս չհասած, ճանապարհին Գա-

*) Իշխան Յիշիանովը Պետերբուրգում Յովսէփ Արդութեանին պատահելով՝ զինուրական պատիւ չել տւել նրան: Յովսէփին էլ գանգսատել և Յիշիանովին, որ այդ ժամանակ հասարակ սպայ էր, սպատմէլ էր տւել:

**) ԱԿՏԱ, Հատող II, Եր. 274, № 537.

Նիէլի բանտարկւելը լսելով՝ մի սպառնական թուղթ է զրել Երևանի խանին՝ Դանիէլին անսպատճառ բանտից հանելու համար. թէ այդ սպառնափիքի ազգեցութեան տակ՝ Դանիէլը այժմ բանտից հանւած է և իրան շնորհակալութեան թուղթ է զրել Էջմիածնից:

Դանիէլին բանտից այս կերպ ազատելուց յետոյ՝ իշխան Ցիցիանովը ուղարկեց նրա կաթողիկոսութեան հաստատման հրովարտակը:

Հրովարտակը կաթողիկոսին ուղարկեցաւ յատուկ պատգամաւորութեան ձեռքով, բաղկացած Զույկօ ազգանունով մի սպայից և Ռամազ Օրբելեան անունով մի իշխանից:

Բայց այդ պատգամաւորութիւնը լոկ պարբռակ էր: Որովհետեւ Զույկօյին հրահանդ էր տրւած ճանապարհները և Երևանի բերդն ու նրա դիրքերը ուսումնասիրել ու նկարել: Իսկ Օրբելեանը յայտնի լրտես էր և առաջին անգամ չէր, որ Երևանի կողմերն էր գնում գալիս՝ ծպտեալ կերպով:

ԽԳ.

Պատգամաւորութիւնն ուղարկելուցը քիչ յետոյ՝ իշխան Ցիցիանովը մի թուղթ էլ Երևանի հայ յայտնի մելիք՝ Աբրահամին և տեղական բուրք աշխարհիկ և հոգեսոր հայերին ուղղեց:

Ընթերցողը պիտի գիտենայ, որ ինչպէս որ ուրսահայերը ուուսաց կառավարութեանն էին հակամիտւում միշտ, — նոյն բանն անում էին և

պարսկահայերը պարսիկ կառավարութեան նըկատմամբ:

Արդ՝ ի նկատի առնելով, որ պարսիկ կառավարութիւնը Դաւթին է հովանաւորում, — Երևանի հայերն էլ խանի հրահանգով էին ընթանում:

Նա մանաւանդ որ մելիք Աբրահամը Դաւթի խնամին էր: Մելիքի աղջիկը Դաւթի եղբօր կինն էր: Հետևաբար մելիք Աբրահամը Դաւթի ջերմ պաշտպանն էր թէ ի պատիւ ինսամութեան և թէ ի հաճոյս պարսիկ կառավարութեան:

Եւ ահա հէնց այս մելիք Աբրահամին էր ուղղւած Ցիցիանով իշխանի նամակը, որով սպառնում էր Երևանի հայերի տուն ու տեղերը քարուքանդ անելու, եթէ որ նրանք Դանիէլի կաթողիկոսանալուն հակառակեն, կամ արդելիքներ հանեն:

Ապա Ցիցիանովը խորհուրդ է տալիս մելիք Աբրահամին և առհասարակ Երևանի հայ ազգաբնակութեանը, որ իրանց (Երևանի) խանին չլսեն, վասն զի, — գրում է իշխան կառավարչապետը, «քիչպէս և նու ձեր իշխող մեծաւորն է, սակայն ձեր կրօնիցը չէ: Խանը քիստնեայ չէ, ուրեմն ինչ զարմաց, որ կեղծ կարողիկոս Դաւթից Էջմիածնի ոսկիներով և թանկագին քարերով կաշառւելով*), յանդզնում

*.) Դաւթիթը ամեն տեղ, նոյն խոկ կայսեր զբած թղթերում ըստոքում է, որ Ցիցիանովը զբարտում է: Եւ խիստ քննութիւն է պահանջում:

է քրիստոնեական եկեղեցւոյ ծերունազարդ պետի հետ խստութեամբ վարւել: Խանին, իբրև մահմեդականի, նոյն իսկ իրանց օրէնքը հրամայում է քրիստոնեաներին հալածել, հապագուք, որ Դանիէլի նման Քրիստոսի հաւատացեաներ էք, ձեզ ի՞նչն է սահմանում խանի օրինակին հետևել»:

«Խանը՝ կեղծ կաթողիկոս Դաւթի օդափին՝ չարչարելով Դանիէլ կաթողիկոսին, իւր կրօնի պատւելներն է կատարում, իսկ դուք, որպէս մատնիչ Յուդա, ձեր այդ վարմունքի համար Վերջին դատաստանի օրը հաշիւ պիտի տաք»:

«Եօթ ես այդաեղ գամ, խանը կը վախչի, իսկ դուք և ձեր տները չէ որ իմ ձեռքի տակն էք մնալու: Լաւ իմացէք, որ այն ժամանակ ձեզ էլ, ձեր տներն էլ սրի ու հըի կերակուր կշինեմ անխնայօրէն: Ուշքի եկէք, խելքներդ գլխներումդ հաւաքեցէք, ձեր հոգիները մի կորցնէք, մի թողնէք, որ չար սատանան, օձը խարբալէ նրանց»—և այլն*):

ԽԴ.

Որքան ոռւս կառավարութիւնը իրանն էր պնդում, այնքան պարսից կառավարութիւնը յամառում էր:

Եւ որքան ոռւսը Դանիէլին պաշտանում էր, այնքան պարսիկը նրան չարչարում էր:

*) ԱԿՏԵ, ՀԱՄԱՐ II, ԷՐ. 275, № 538 և ԴԻՒԱՆ ՊԵՐԵ Ե. ԷՐ. 332—334.

Բանն այնտեղ հասաւ, որ Երևանի բանալից մերկ ձիու վրայ՝ Էջմիածին հասցրած և այնտեղ «ի գուք անդնդախոր» բանտարկւած ծերունի Դանիէլին մօրուքը, ընչացքը և գլխի մազերն Դաւթիթը բանութեամբ գերծել տւեց ասեւով «թող հիմայ գան ոռւսներն քեզ օգնեն»*): Եւ ոռւսները եկան:

1804 թւականին իշխան Ցիցիանովը Երևանի խանից է միջի այլոց, պահանջում էր նախ՝ Դաւթիթ կաթողիկոսին յանձնել ոռւսաց ձեռքը՝ ուղարկելով նրան թիֆլիզ, ուր նա տէրութիւնից թոշակ ստանալով ապահով կապրի և երկրորդ՝ Դանիէլին բազմեցնել հայրապետական գահի վրայ:

Ցիցիանովի այս պահանջին խանը այսպէս պատսամխանեց՝ «դու ուրիշ բան ասա, թէ չէ արժէ» հայոց երկու եպիսկոպոսների համար այդքան աղմուկ հանելլ»:

Մը և նոյն ժամանակ խանը Երևանի բերդն ամրացնելով Դաւթին էլ, Դանիէլին էլ բերել տւեց Էջմիածնից և Երևանի նշանաւոր ու ազգեցիկ հայերի հետ միասին բերդում բանտարկեց:

Ցիցիանովը երկու ամիս պաշարեց բերդը, բայց պաշարի պակասութեան պատճառաւ՝ թողեց և գնաց Էջմիածին:

Այդ ժամանակ վանքում և նրա գաղտնի ամբարնելում բաւականին հաց, մթերք կար պահւած:

*) Դիւան ՊԵՐԵ Ե. ԷՐ. 340—341.

Յիցիանովը այդ ամենը վերցրեց իւր զորքին բաժանեց։ Բացի դրանից իշխանը ժողովնեց նաև Մայր Արոռի հարստորիննը՝ դրամները, ականակուր պատկերները և մասունքները և տան և մեկ հակ կապելով՝ զօրին հետ ուղարկեց Թիֆլիզ մի եպիսկոպոսի վերահսկողութեամբ, որ էր Յովհաննէս գեղարդակիրը։

Իւր այս վերջին վարմունքը Յիցիանովը նրանով էր բացատրում, իբր թէ ինքը երկաղ էր կրում, որ ոռւս զօրքի հեռանալուց յետոյ պարսիկները կարող են գալ և վանքի հարստութիւնը յափշտակել։

Կարծես թէ Մայր Աթոռի համար մը և նոյն չէր թէ՝ յափշտակողը ով է, — Երեանի մահմեդական խանը թէ քրիստոնեայ իշխան կառավարչապետը։

Յիցիանովի առաջ բերած պատճառը՝ ի հարկէ՝ պատճառ չէր, այլ պատճառանք, պատըրւակ։

Երեանի հայերին և նրանց մելիք Սբրահամին ուղղած Յիցիանովի նամակից ընթերցողը տեսաւ, որ այդ իշխանը բաւականին ծանօթ էր ո. զրքի դարձւածներին և նրանցմով էլ խօսում ուամիկ ժողովրդի հետ։

Այժմ էլ էջմիածնի հարստութիւնը վերցնելով անշուշտ իշխան Յիցիանովը դեկուման էր ո. զրքի մի այլ դարձւածքով թէ՝ «ուր գտնձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղեյին»։

Ուստաց զօրքի հեռանալուցը յետոյ՝ խանը

բերդից արձակեց թէ հայ իշխաններին և թէ Դաւթին ու Դանիէլին

Վերջիններս ուղևորւեցան Էջմիածին, ուր մի քանի օրից յետոյ եկաւ Ֆատ-Ալի շահը։

Կապոտած ձեռքերով և լերկ երեսով ու գլխով ցաւագար ծերունի Դանիէլին Շահի առաջ հանեցին։

«Դու ես, հարցրեց խրոխա զահը, որ այս մըրիկը յարուցիր մեզ վրայ», և կալանաւորին յանձնեց Մարաղայի խանի պահպանութեանն ու հսկողութեանը։

Եւ խանը Դանիէլին իւր հետ վերցրած աքսոր տարաւ Մարաղա։

Խե.

Մարաղայում պարսիկները Դանիէլի հետ էին վարւում։

Ահմէդ խանը նրան իւր ապարանքում էր պահում. Օրդուխան անունով մէկին էլ՝ նշանակած էին նրան խօսակից, մխիթարիչ։

Այս նշանակում է, որ Դանիէլը խանի տանը բանտարկւած էր և ենթակայ յատուկ և խիստ հսկողութեան։

Իւր այս վիճակի ծանրութիւնը, անշուշտ, Դանիէլ կաթողիկոսին ճնշում էր, ինչպէս երեւում է եփրեմ արքեպիսկոպոսին զրած նրա մի նամակի հետևեալ տողերից՝ «այս երկու տարի եղաւ, որ Օրդուխանն ի զիշերի և ի տւնջեան զմեզ մխիթարէ. զի կամ ի տան Ահմէդ խանին և ի կիրակէսն գնամ յեկեղեցին և դառնամ ի տեղին իմ»։

Գալով աքսորական կաթողիկոսի նիւթական վիճակին,—նա աւելի անմիջիթար էր։ Այս էլ երեսում է նրա այն մի նամակիցը, որ 1806 թւականին ուղղել էր Թաւրիդ իւր մի բարեկամին, Յովակիմ Սաղաթելեան անունով։—«Խընդում ի քէն, զի ագանելի բարուճա մաշեալ է, մէկ ջուխտ բարուճ ուղարկես ինձ, որ հազնեմ, քեզ օրհնող լինեմ»*):

«Ու խարջուխի (ծախսի փող) կողմանէ նեղութիւն կրեմ»—գրում էր հետեւ տարին Եփրեմ արքեպիսկոպոսին, որը և հոգում էր նրա ծախսերը և ագանելիքը՝ իւր ծանօթ պարսկահայ վաճառականների միջոցաւ։

Այսպէս ահա՝ մինչդեռ Դանիէլը Պարսկաստանի խորքերում տառապում էր՝ էջմիածնում Դաւիթը միահեծան կաթողիկոսութիւն էր անում թեկն տւած պարսից պաշտպանութեանն ու հովանաւորութեանը։

Դանիէլի աքսորմամբ՝ նա իրան աւելի աղատ էր զգում այժմ և ամենայն խստութեամբ պատժում ու պատուհասում էր իւր հակառակորդներին, իւր դէմ ըմբոստացողներին։

ԽԶ.

Եկաւ 1805 թւականի մարտ ամիսը։

Ռուսական զօրքի Սարատօվեան գունդը, Պետական կառավարութեան մասնակի առաջնորդութեամբ՝ Շիրակի կողմից յանկարծ էջմիածին մտաւ։

*.) Դիւան դիրք Ե. Եր. 447.

Այդ ժամանակ Դաւիթը Երևան էր գնացած։ Նէսվէտայեվը նրան մի նամակ գրեց այն բովանդակութեամբ թէ՝ «իբրև քրիստոնէի ոչ վայել է քեզ այդպէս հետեւող լինել տաճկաց (պարսից), այլ որպէս վայել է քրիստոնէութեան. ահաւասիկ մենք քրիստոնէայ և դուք պատրիարք քրիստոնէից, պարտ է ուրեմն զի Ելեալ հեղացես և մեծ ողորմութիւն վայելես յԱմենաողորմած Կայսերէ մերմէ»։

Դաւիթը, ի հարկէ չեկաւ, չվստահացաւ գալու, Մինչև անդամ հեգնօրէն հասկացը եց ոուս ժեներալի նամակաբերին, թէ էջմիածին կզայ ընծաներով, — այսինքն պարսկական զօրքերով։

Այդ պատասխանից յետոյ՝ Նէսվէտայեվը ժողովեց վանքում մնացած անօթներն, զգեստներն, մասունքներն իրանց վրայի թանկագին քարերովը (զմրուխտ, յակինդ, մարզարիտ, պիրուզա, փոքր և մեծ բրիլիանտներ), վերցը կաթողիկոսական թանկագին, ականակուռ թագերն, վակասներն, գաւազաններն. վերցը նաև գանձարանի գլամին. որոնեց, գտաւ Դաւիթի թագցրած արկղիկը (չէքմէջէն), կոտրեց և հանեց այնտեղ եղած մատանիները ու ուկիները, վերցը գորգեր, սփռոցներ, և ամենը զօրքի հետ տարաւ Թիֆլիս*）

Այս երկրորդ կողոպուտից (առաջինը, ինչպէս զիտենք, իշխան Ցիցիանովի ձեռքով կա-

*) ԱԿՏԵ, հատոր II, Եր. 276, № 543.

տարւեց) յետոյ, էջմիածինը և նրա միաբանութիւնը բոլորովին տկլոր մնաց, բառիս բուն նըշանակութեամբ:

ԽԵ.

Այս յափշտակութիւնից թերեւս ծագելիք անախորժութեան առաջն առնելու համար՝ իշխան Ցիցիանովը մի յայտարարութիւն ներկայացրեց թագաւոր կայսեր՝ գեկուցանելով, որ ժեներալ Նէսվէտայեվը վանքի զարդերն վերցրել է իրակ թէ միաբանութեան խնդրանօքը:

Թէ Թիֆլիզում այժմ այդ ամենը ցուցակագրում է:

«Երբ ցուցակագրութիւնը վերջանայ, — շարունակում է իշխանը, — ես հայերին կմիամտեցնեմ, որ թէ առաջ և թէ յետոյ, վանքից վերցրած բոլոր իրեղէնքը կվերադարձի վանքին, երբ կաթողիկոսական գաճի վրայ բարձրանայ Դանիէլը:»

Սակայն երբ 1806 թ., ինչպէս քիչ յետոյ կտեսնենք, Դանիէլը գաճ բարձրացաւ և ինդրեց վերադարձնել վանքին նրա սեպհականութիւնը նոր կառավարչապետ Գուգովիչը մի մասը միմիայն վերադարձրեց:

«Մնացածը, — գրում էր նա մինիստրին, — ինձ մօտ կապհւին այնքան ժամանակ, մինչեւ որ պարսից հետ մեր սկսած գործերը բոլորովին կվերջանան»: — Որպէս զի, — աւելացնում է Դուդովիչը, եթէ հաշտութեան դործը զուխ չեկաւ՝ յիշեալ սրբութիւններն պարսից ձեռքը չըանցնին»:

ԽԲ.

Նէսվէտայեվի գնդի հեռանալուցը յետոյ, Դաւիթը վերադարձաւ էջմիածին և զարմացաւ ու զայրացաւ ոռւս զօրավարի վարմունքի վրայ: Ուստի և շատ քաղաքավարի լեզով մի բողոք — ինդրեց ուղղեց կայսեր^{*)}): Սակայն խնդիրը ոչ մի հետեւանք չունեցաւ:

Գալով Նէսվէտայեվի տարած իրեղէնների ցուցակագրութեանը, պէտք է ասել, որ այդ ցուցակը միաբանութեան ցուցումներին չէ համապատասխանում:

Վանքի սեպհապականութիւնն վերցնելու պատրաստելով ոռւս ժեներալը խոստացաւ, որ երկու ցուցակ կազմւի առ տեղեամն և մինը միաբանութեանը յանձնաւի, միւսը ժեներալին: Բայց յետոյ ամեննին միաբան ոչ հանդիպեցուցանէ, այլ ինքն եներալն իւր արամքն բացեալ զամենայն զդրունս ծածուկ սենեկաց սրբոյ Արոնոյն ժողովեն զամենայն, զոր ինչ գտանի»^{**)}):

Թերեւս այս է պատճառը, որ Թիֆլիզում իշխան Ցիցիանովի հրամանաւ կազմւած ցուցակում^{***)} նախ և առաջ՝ ոչ մի յիշատակութիւն չկայ Դաւթի 4 պարկերի մէջ թագցրած 50 հազար թումանի ոսկիների մասին: Երկրորդ՝ ոչ մի յիշատակութիւն չկայ նաև այն երկու բամբակէ արխալուղների մասին, որոնց իւրաքանչուրումը 2000 ոսկի է եղել կարած:

^{*)} ԱԿՏԵ, հատոր II. եր. 278, № 545.

^{**)} Դիւան գիրք Ե. 441—446.

^{***)} ԱԿՏԵ, հատոր II. եր. 278, № 545.

Այդ արխալուդներից մէկը Նէսվէտայեվի ձեռին են տեսել միաբաններից ումանք, իսկ միւսի ում մօտ լինեն՝ չգիտեն:

Ցիցիանովի կազմել տւած ցուցակում երեմն յիշւում է, թէ այս ինչ ու այն ինչ պատկերի կամ մասունքի թանկագին քարերիցը՝ այսքան ու այնքան պակաս է, չկայ:

Գուցէ զրանք այն քարերն են, որոնք «վաճառեալ են ի մէջ զօրացն ի գալն և ի ճանապարհին»: — Ինչ և իցէ:

Եւ կամ գուցէ այն քարերն են, որոնք Բամբակաձորի բնակիչներն տեսել էն Նէսվէտայեվի ձեռին, «բազում իրք պատւականք ունկեցն, արծաթաղէն, նաև գումար ուկւոյ և սպիտակ զրամոյ, զորս գաղեալ՝ կամի-վայելել»*) լիթ.

1806 թւականի փետրւարին իշխան Ցիցիանովը Բագւում սպանելով՝ նոր կառավարչապետ եկաւ կոմս Գուգովիչը:

Սա դեռ Թիֆլիս չէր ժամանել, երբ ճանապարհին նախարարիցը մի զրութիւն ստացաւ ստուգելու և կայսեր տեղեկագրելու համար թէ հայոց իրկու միմեանց հակառակորդ կաթողիկոսներից՝ որի կողմը աւելի է հակւած այդ ազգը՝ արգեօք Դանիէլի, թէ գուցէ Դաւթի:

Փետերբուրգի արքունիքի այս անակնկալ հարցումը, այս տարօրինակ յանձնաբարութիւնը, մեր կարծիքով, ահա թէ ինչ բանի պէտք է վերագրել:

*) Դիւստ. գիրք Ե. Կ. 450—452.

Ինքզինքը հայոց արքեպիսկոպոս անւանող և վաճառականի շօրերով Օդեսա ժամանող մի անձն, — իշխան Օրբելեանի, — քաղաքի ժենեռալ նահանգապետ հերցոգ Ռիշելիոյին մի ինդիր էր*) Ներկայացրել կայսեր մատուցանելու համար:

Խնդրատուն գրում է, որ հայոց ազգի մեծամասնութիւնը Դաւթի կողմն է. թէ հաղածելով վերջերում Դաւթին՝ ուսւ կառավարութիւնը իրանից սառեցրեց նաև հայ ազգի սիրտը. թէ՝ Դանիէլի արարմունքն միանգամայն ազօրինի են և հակառակ հայոց եկեղեցական կանոններին և ազգային սովորութիւններին:

Վերջ ամենայնի կեղծ արքեպիսկոպոս իշխան Օրբելեանին կայսրից խնդրում է, ա. թոյք լատրել Դաւթին, որ իւր հաւատարմատարին ուղարկէ Պետերբուրգ անձամբ բացատրութիւն տալու կայսեր՝ իւր անմեղութեան և առ կայսերական կահն տածած հաւատարմութեան մասին, բ. չնորհել Դաւթի հաստատութեան կայսերական հրովարտակը, գ. վերադարձնել ժենեռալ Նէսվէտայեկի էջմիածնից տարած կաթողիկոսական և վանական սեպհականութիւնքն, վերջապէս դ. Դաւթի հակառակորդներին էջմիածին ուղարկել, ուր նրանք ներման կարժանանան, եթէ որ զղան:

Այս խնդրի տակ ստորագրել են եւ եպիսկոպոսներ և վարդապետներ և աշխարհականներ:

*) Ակտы հայոց. III. երես 78—79, № 148.

— Զգիտենք, չենք երաշխաւոր թէ՝ դրսնք իսկական ստորագրութիւններ են թէ՝ կեղծ, ինչպէս որ կեղծ է իրանց պարագլուխ և խնդրի վերևում ստորագրւած իշխան Օրբելեանիի հայոց արքեպիսկոպոսութիւնը:

Ինչ էլ որ լինի, այս ինդիրը անշուշտ Դաւթի կամ նրա կուսակից Գրիգոր Եպիսկոպոսի իրան գիտութեամբն ու թելագրութեամբն է գրւած:

Եւ եթէ իշխան Օրբելեանի—արքեպիսկոպոս—վաճառականը՝ մեր ընթերցողներին արդէն յայտնի՝ ոռւսական լրաես Թամբազ Օրբելեանին է, ինչպէս որ մենք ենթադրում ենք,—ապա պէտք է կարծել որ այստեղ էլ մի այլ տեսակ քաղաքագիտական խաղ կայ, —թերևս Դաւթին գրաւելու, որսալու: Որովհետև Դաւթին՝ անհամեմատ աւելի ծանօթ էր պարսկական գործերին և գործիչներին, քան Դանիելը:

Մեր այս ենթադրութիւնը հիմնւած է և այն հանգամանքի վրայ, որ դրանից առաջ էլ ոռւս կառավարութիւնը փորձեր էր փորձում Դաւթին իւր կողմը ձգելու նորից:

Ահա թէ ինչպէս:

Ծ.

Պօլսոյ ոռւսաց գեսպանատան մէջ մի հայ ծառայող կար՝ Խրիմեցի Գէորգ Աղայեկովը:

Տամարա գեսպանի, Պօլսոյ հայերի, նրանց պատրիարքի և Էջմիածնի կաթողիկոսի հետ ունեցած յարաբերութիւնների ժամանակ՝ Գէորգ Աղայեկովը մէծ դէր էր խաղում:

Հայկական գործերի նկատմամբ՝ Աղայե-

կովը՝ Տամարա գեսպանի ամենալաւ ագենտը, գործիչն էր: — Եւ իրեւ ագենտ վարձկան՝ Գէորգ Աղայեկովը, ի հարկէ, գեսպանի հրահանգներով էր շարժում միշտ:

Աղայեկովն էր, որ Դաւթից մեծ և փոքր գումարներ էր ստանում և նրանցմով նրա համար բարեկամներ ու պաշտպաններ ճարում:

Այդ Աղայեկովն էր, որ ամենայն ցինիկութեամբ գրում էր Դաւթին՝ «որքան փող ունիս չինայես, ձեռքաց լեր.. փող չինայես, որքան ունիս խարճեա, թէ չունիս իմբդ վաճառես տաս, այս բանն փողով կըլլայ»*):

Արդ՝ հէնց այս Գէորգ Աղայեկովն էր, որ 1803 թւականին (երբ ոռւս իշխանութիւնը Դաւթից երեսը շուրջ էր տուել) այսպիսի հրահանգ էր տալիս Դաւթին՝ «հարկ է հաւատարմութիւն ինչ ցուցանել տերութեանն հիւսիսոյ (ոռւսաց): «Դրեսցես աս առ դեսպանն հարկաւոր ինչ որպիսութիւն կողմացդ. զի և սա զայն պատճառ առեալ գրեսցէ առ տերն իւր և յայտնեսցէ զհաւատրիմ զոյն ձեր և համարձակ գրեսցէ ինչ ինչ և վասն հաւատելոյ զկարողիկոսութիւն ձեր»:

Նոյն Գէորգ Աղայեկովն էր, որ մի այլ անգամ այսպիսի հրահանգ էր տալիս նոյն Դաւթին՝ «գրեա զորպէսն Ստրպատական իշխանացն և զիսորհրդոց նոցին. ընդ նմին զթագաւորէ նոցին և զկամացն, թէ զինչ խօսին կամ խորհին

*.) Դիւան Հայոց պատմ. Դիրք Զ. էր. 138—139 և 395—396 և հ գիրք Ե. էր. 128—129.

վասն հիւսիսականացն, և կամ մերձ եղեալ սահմանակիցքն զի՞նչ մտացն խօսին. զայսպիսի ինչ որքան կարես գետել, գրեա. որպէս թէ դուք (Դաւիթ) քրիստոնէից քահանայապետ գոլով՝ ցանկաս և ջանաս քրիստոնեայ տէր և թագաւոր ունենալ վասն ազգին»:

ԾԱ.

Աղայեկովի այս խորհուրդներին սկզբում Դաւիթը այնքան նշանակութիւն չէ տալիս՝ յոյսը միմիայն պարսից վրայ դրած լինելով։ Բայց երբ վերջերում տեսաւ, որ ոռուները քայլ առ քայլ մօտենում են էջմիածնին և մօտ ապագայում Մայր Աթոռի տէրը նրանք պէտք է դառնան, — ուստի և, հաւանական է, որ նա ինքն էլ կամեցաւ նորից ոսներին մօտենալ։ Եւ ահա հէնց այդ ժամանակ լրյս աշխարհ է ընկնում կեղծ հայ արքեալիսկովոս իշխան Օքբելեանիի վերոյիշեալ խնդիրն յանուն ոռուսաց կայսեր և ի պաշտպանութիւն Դաւիթի։

Դոյն այդ ժամանակումն էր, որ Դաւիթը նեսվէտայեկ ժենեռալի յափշտակութեանց առթիւ, և թերեւս այդ բանը պատրւակ բռնելով՝ իւր բողոք — խնդիրն, ուղղեց կայսրին։

Ինչպէս իւր տեղում յիշել ենք այդ բողոք — խնդիրը զբւած է շատ քաղաքավարի, շատ երկուղած ողով ու շողոքորթ դարձւածներով։ Դաւիթը երդմամբ հաւատացնում է կայսեր, որ ինքը ի բոլոր սրտէ սիրում է իսկական քրիստոնեաներին և նրանց յաջողութեանը համար

ջերմեռանդ աղօթող է։

Կրկնում ենք՝ մեր կարծիքով Դաւիթի սոյն այս խնդիրը և իշխան Օքբելեանիի խնդիրն էին առիթ տւել Պետերուրովի արքունիքին հարցնելու Գուգովիչից թէ՝ երկու հակառակորդ կաթողիկոսներից՝ որին պէտք է նախապատռութիւն տալ տէրութեան շահերի տեսակէտով։

ԾԲ.

Հաշտութեան այն պայմանի մէջ, որ ոռուսները առաջարկեցին պարսիկներին, մի կէտը վերաբերում էր Դանիէլին վերադարձնելու և կաթողիկոսական գահի վրայ բազմելու մասին։

Շահը այդ պայմանը ընդունեց՝ անսալով գահաժառանդ Աքբաս Միրզի խորհրդին։

Աքբաս Միրզան քաղաքադէտ էր։ Նա տեսնում էր, որ պարսիկները հետզհետէ յաղթւում են և յաղթանակողի, — ոռուս կառավարութեան, առաջարկած հաշտութեան պայմանները՝ երթալով ծանրանում են Պարսկաստանի վրայ։

Գիտեր, տեսնում էր Աքբաս Միրզան, որ Դանիէլը ոռուս կառավարութեանը սիրելի և հաճելի անձնն է։ Հետևաբար նրան կաթողիկոսացնելով՝ պարսիկ կառավարութիւնը իւր՝ և ոռուս կառավարութեան մէջ մի վստահելի միջնորդ և բարեխօս կունենայ։

Աքբաս Միրզան մինչև իսկ առաջարկեց Դանիէլին, որ նոյն 1806 թւականի հաշտութեան պայմանները փոքր ինչ մեղմելու համար՝ Դանիէլը անձամբ անձին միջնորդ համարականայ

Գուգովիչի առաջ:

Դանիէլը հրաժարւեց՝ պատճառաբանելով, որ ինքը անձնական ծանօթութիւն չունի ուսւս մեծամեծների հետ։ Սակայն Դանիէլի այս բացասումը արգելք չեղաւ, որ Դանիէլը աքսորից ազատվի և կաթողիկոս դառնայ։

Շահը Երևանի խանին, որ Պաւթի ջերմպաշտապանն էր, փոխեց և նոր կարգւած խանին հրահանդ տւեց՝ շքեղ հանդիսով Դանիէլին կաթողիկոսացնել։ Իսկ ինքը՝ Շահը, իւր կողմից, պէտք եղած պարզեազրերն ու պարզեները ամենայն առատութեամբ արդէն տւել էր Դանիէլին։

500 պարսիկ ձիաւոր զինւորներ Մարադայից ուղեկցում էին Դանիէլին մինչև Երևան։

Երևանի սարգարն էլ՝ կաթողիկոսին ուղղակի իւր պալատը իջեցրեց և ամենամեծ յարգանք և հիւրասիրութիւն ցոյց տւեց։

Էջմիածնի բարձրաստիճան հոգեւորականներից շատերը Երևան էին եկել Դանիէլին զիմաստելու։

Նրանց թւումն էր և Պաւթի կաթողիկոսը, որին հրամայւած էր Երևանում լինել այդ ժամանակ։

Հստ պահանջման սարդարին Պաւթը մտաւ պալատը, ուր կաթողիկոսավայել աեղում Դանիէլին նստած տեսնելով իսկոյն դուրս եկաւ ասելով՝ «Հայստեղ ինձ համար նստելու աեղ չկայ, իմ բարձը ուրիշն է բոնել»։

ԾԳ.

Վեց օր սարդարի հիւրասիրութիւնը վայեւելուց յետոյ՝ Դանիէլը դուրս եկաւ Երևանից, որտեղ Դաւիթը նրան յանձնեց կաթողիկոսարանի բանալին ասելով՝ «Կաթողիկոս եղբայր, առ այս եթէ ես դրանից շահւեցայ, դու էլ կըշահւիս»։

Մայիսի 20-ին, 1805 ամին, Դանիէլը մեծ շքով մեկնեցաւ դէպի էջմիածին։

Բացի պաշտօնական անձինքներից՝ նրան ուղեկցում էր հոգեւորականների և աշխարհականների ստուար բազմութիւն։

Դանիէլը գնում էր ձիով և Պաւթի հետ միասին*):

Ճանապարհին զիմաւորողների թիւ ու համար չկար։ Ամենքն էլ զալիս էին և ակնածութեամբ Դանիէլի աջն առնում։

Վերջապէս հասան էջմիածին, ուր Պանիէլը խիստ վայելուչ սենեակներ յատկացրեց Պաւթին, որի հետ առհասարակ, շատ մեծահոգութեամբ էր վարւում։ Շատ անգամ կաթողիկոսարանից իջնելով նրան այցելութիւն էր գընում, հետը խօսակցում ու մխիթարում։ Եւ նա այս անում էր ինքնաբերաբար, նախ քան այդ մասին ուսւս կառավարութիւնից հրահանդ ստանալն**):

*) Պէլպէլեանը իւր «Հայոց պատմութիւն» գրքումը ասում է, «որ սարգաւը կարգազրել էր, «որպէսզի Պաւթը բոկոսն և զիւաբաց Դանիէլի ձիու ասածից զնայ։ Սակայն զիշտնելով Պաւթի ինդրանաց՝ թոյլ տւեց, որ նու ևս ձի հեծնիք».

**) Ակտե, հատոր III էր,

Իսկ այդ հրահանգը այն քաղաքական նպատակն ուէր, որ զուցէ, մի օր Դաւիթը պէտք կուգայ ոսներին:

Պարզևատրելու նկատմամբ՝ պարսիկ կառավարութիւնից յետ չմնաց ոուս կառավարութիւնը:

Կայսրը առանձին հրովարտակով Դանիէլին շնորհեց Ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանը հանդերձ ժապաւէնով և աստղով:

Սա առաջին օրինակն էր, որ հայոց կաթողիկոսը՝ պարսից հպատակ գոլով ոսներից շքանշան էր ստանում, այն և՛ ս. Աննայի առաջին աստիճանի շքանշան:

Դանիէլը երկու օր միայն այդ շքանշանը կախեց: Յետոյ հանեց և յայտնեց սարդարին՝ գործածելու համար Շահի հրամանին սպասելով: Աբրաս Միրզան Շահի հրամանաւ՝ թոյլատրեց կըել յիշեալ շքանշանը:

ԾԴ.

Բայց ոչ պարսկական, ոչ էլ ոուսական պատիւներն ու պարգևներն ոչնչով չէին կարող օգնել ծերունի կաթողիկոսի քայլայւած առողջութեան վերականգնանը: Նա իւր օրերի մեծ մասը անկողնումն էր անցկացնում:

Բժիշկը նրա վլսից անպակաս էր:

Այդ ժամանակ էջմիածնի մատենադարանում մի ձեռագիր հին բժշկարան կար: Կաթողիկոսին ինամող բժիշկը՝ պահանջեց յիշեալ բժշկարանը: Մատենադարանում չերկեցաւ: Հարց

ու փորձից երևեցաւ, որ Գաւթի մօտ է: Պահանջեցին՝ նա չտեց:

Այդ միջոցին Դանիէլի ջերմ պաշտպան ներսէս վարդ. Աշտարակեցի (յետոյ կաթողիկոս) մի քանի մարդով յարձակւեցաւ Դաւիթի վրայ և նրան լաւ ծեծելուց և ջարդելուց յետոյ՝ մորուքը խուզել տւեց ու բանտը ձգեց:

Այս խայտառակ գէպքը լսելով հիւանդ Դանիէլը կարեվեր վշտացաւ ներսիսից և նրա գործակիցներից:

Անտարբեր չմնաց Երևանի սարդարն ես: Նա էջմիածին եկաւ՝ յանցաւորներին խիստ պատժելու: Սակայն Դանիէլը, ներսիսից հարկադրւելով, սարդարի առաջ վկայեց, իբր թէ իւր հրամանաւն է ներսէսը այդպէս վարւել Դաւիթի հետ: Մասամբ Դանիէլի այս վկայութեամբ, մասամբ էլ յանցաւորների առաջարկած ընծաներով՝ սարդարը ներեց և բաւականացաւ Դաւիթին բանտից ազատելով միայն:

Դաւիթը այնուհետեւ էլ չմնաց էջմիածնում: Նա գնաց Երևան և իւր Բարսեղ եղբօր,—մելիք Աբրահամի վեսայի, —տանն էր ապրում:

ԾԵ.

Անձնական հիւանդութիւնը և ծերութիւնը, Մայր Աթոռի թալանւած, աւերւած զրութիւնը ժողովրդի և միաբանութեան ցրիւ գալը, վերջապէս Արարատեան աշխարհի պատերազմական, վրդով դրութիւն, ոչ մի հնարաւորութիւն

չէր տալիս կաթողիկոսին մի որևէ է գործի ձեռնարկել յօդուտ Աթոռի և ազգի։ Նա մանաւանդ որ հետեւեալ 1808 թւականին նորից բորբոքւեցաւ պատերազմը ոռւսաց և պարսից մէջ։

Երևանի սարդարը Երկիւղ կրելով, որ եթէ Դանիէլ կաթողիկոսը էջմիածնում մնայ՝ ոռւս զօրապետները կարող են նրան իրանց օգտին ծառայեցնել, — Դանիէլին, հիւանդ-հիւանդ, Երեւան բերել տւեց և բերդումն էր պահում։

Ռուսները Երկու ամիս պաշարած ունէին բերդը։

Այդ պաշարման ժամանակ՝ հոկտ. 9-ին 1808 թւականի՝ բազմաչարչար Դանիէլ կաթողիկոսը կնքեց իւր մահկանացուն։

Նրա մարմինը զմռսելով՝ բերդում պահեցին մինչև նոյեմբերի վերջը, Երբ ոսները յետքաշեցան։ Ապա տարան էջմիածին և այնտեղ զանդակատան մօտ թաղեցին։

ԾԶ.

Մահւանիցը Երեք ամիս առաջ՝ Դանիէլ կաթողիկոսը մի խնդրագրով դիմել էր Աղէքսանդր Ա. կայսեր՝ աղաչելով, որ իւր մահւանից յետոյ՝ Եփրեմ արքեպիսկոպոսը լինի իւր յաջորդը^{*)}։

Կաթողիկոսը վախենում էր, մի գուցէ իւրանից յետոյ՝ Դաւիթը իբրև արքէն մի անգամ օծւած՝ ուղղակի տիրապետէ կաթողիկոսական գահին։

Դաւիթը այդ նպատակի համար հէնց աշխատում էր էր՝ Այդ զիսէր Դանիէլը։

^{*)} ԱԿՏԵ համ. III, Եր. 82.

— «Այժմ ևս մինչդեռ մեք կենդանի եմք, — գրում էր նա կայսեր, — նոյնպէս անկեալ ի գրունս բարբարոսաց խոստանայ նոցա զկաշառս, զի վերստին ստասցի զբոնաւորական իշխանութիւն իւր^{*)}։

Ուստի Դանիէլը թախանձում էր կայսեր, այժմեանից հրամայել կովկասի կառավարչապետին, ուղղէս զի սա կաթողիկոսի մահւան դէպում «իսկոյն գրեսցէ առ Երևանու պարսից սպարապեան, ևս և առ Օահզարայն (Արքաս Միրզան), զի զԴաւիթն մի ևս միւս անգամ յառաջ բերցեն ի բռնաւորութեան իւրում»։

Մի ամիս յետոյ՝ Դանիէլը կրկնեց իւր խընդիրը աղաչելով կայսրին, որ Եփրեմին այժմեանից ուղարկէ էջմիածին, որպէս զի ինքը իւր ձեռքով կաթողիկոսացնէ նրան^{**)})։

Ի տեղեկութիւն մեր ընթերցողներին պէտք է յայտնենք, որ Դանիէլը այս թղթերը գրում էր Ներսէս Աշտարակեցւոյ թելագրութեամք, նրա ձնշամք։ Այսպիսի դէպքերում Ներսէսը դրականաբար պահանջում էր հիւանդ կաթողիկոսից՝ «կամ մեզ ճանապարհ տուր, որ ուր կարող լինեցիմք, գնամք, և կամ թէ Սարգարի և Շահզարայի թղթովս մեզ միամտութիւն տուր, որ Դաւիթն չինի ամենեին կաթողիկոս և որք. Եփրեմը լինի կաթողիկոս յետ ձեր»^{**})։

^{*)} Դիւան զիրք Ե. Եր. 559—560.

^{**) Դիւան զիրք Ե. Եր. 589—590.}

^{***)} Դիւան զիրք Ե. Եր. 616—620.

Բացի կաթողիկոսից՝ Ներսէսը միաբանութեանը ևս գրդեց Սարդարից պահանջել, որ մի գուցէ Դաւթիթը նորից կաթողիկոս դառնայ՝ առելով որ միաբանութիւնը վճռել է Դանիէլին յաջորդ՝ Եփրեմին տեսնել:

Սարդարը «միամտութիւն տւաւ միաբանիցն զրով և երդւեցաւ, թէ Դաւթին անհնար է միւս անգամ կաթողիկոսութիւն։ Եւ միւս թալզայ (ապարգեազիր) ևս տւաւ թէ՝ զրկեցէք, որ Եփրեմ հայր սրբազնն գայ և ինքն ևս երդւմամբ միամտացուցանէ զնա զի գայցէ»։ Պարգեազիր մէջ Սարդարը ի միջի այլոց Եփրեմին զրում է, որ Շահզադայի համար Դաւթիթն արդէն մեռած է, «որ ամեննին յոյսոյ և ակնկալութեան ձանապարհ ոչ գոյ վասն նորա»*):

Ներսէսը և միաբանութիւնը կարծում էին, որ Սարդարը իրանց խաթրու համաձայնում է Դաւթին մերժել և Եփրեմին պաշտպանել։ Սակայն մեր ընթերցողներն արդէն տեսան, որ Արքաս Միրզայի խորհրդով՝ պարսիկ կառավարութիւնը իրան համար ձեռնատու էր համարում, որ էջմիածնի կաթողիկոսը ոռուս կառավարութեան թեկնածուն լինի։

Եւ եթէ Գուգովիչը կարողանար կամ կամենար Դաւթին որսալ և նրա թեկնածութիւնը զընէր և կամ, ինչպէս Սալտիկովը կանխապէս իրաւունք էր տւել, ուղղակի կայսեր անունով Դաւթին կաթողիկոս հաստատէր, — անշուշտ պարսիկ

*) Դիւան գիրք է. Կր. 621—622.

իշխանութիւնը ևս կընդունէր Դաւթին, չնայած Ներսիսի և միւսների աղաջանք ու թախանձանքին։

Ծէ:

Դանիէլի մահւան լուրն տակաւին չստացած՝ Սալտիկովը Գուգովիչին հազորդելով կաթողիկոսի խնդրի բովանդակութիւնը՝ Եփրեմի կաթողիկոսացման նկատմամբ՝ յանուն կայսեր պատւիրում էր, որ երբ Դանիէլը վախճանի, Գուգովիչը պարսից միջամտութեան առաջն առնելու համար՝ «հահգուցեալին յացորդ նշանակէ և կանապէս թագաւոր կայսեր առունով հաստատէ այն եպիսկոպոսին, որին որ կառավարչապիտը իմբը յարմար կհամարէ, միայն թէ՝ այդ եպիսկոպոսը ուստաց շահերին նորուած և հայ ազգին հաճելի (որիտհայ) յինիք»*):

— «Նորին Կայսերական Մեծութիւնը, — շարունակում է նախարարը, — հակառակ չի լինի Դանիէլի մահւանից յետոյ՝ մինչև իսկ Դաւթի կաթողիկոսութեանը, եթէ այս զիջողութեամբ դուք կարող կինէր նրան մեր կողմը շուտ տալ և Պարոկաստանի հետ խաղաղութեան դաշն կապելու ժամանակն, ևս և ներկայ պատերազմական գործողութեանց միջոցին՝ Արա աղեցուրինը ծառայեցնել մեր շահերին։

Գուգովիչը պատասխանեց (1809 թ. փետր. 18-ին) նախարարին թէ՝ Դանիէլը արդէն վախճանւած է. թէ Եփրեմը հայերին սիրելի անձն

*) Ակտы. հատոր III. Կր. 82, № 153.

է: Սիրելի է նաև միաբանութեանը, ինչպէս որ ինքը անձամբ անձին էջմիածնում եղած ժամանակը տեղեկացել է. թէ՝ Գաւիթը հայ ժողովրդին և միաբանութեանը ատելի է: թէ տէրութիւնը երբէք չէ կարող Գաւթի հաւատարմութեան վրայ վստահ լինել և այն*):

Հետևաբար կառավարչապետը նախարարի առաջ միջնորդում էր, որպէս զի Եփրեմը Դանիէլին յաջորդ հաստատի, բայց առ այժմ Թիգվառում պահւի «որտեղից նա կարող կշիճի աւելի մեծ ազդեցութիւն գործել պարսից ձեռին տակ եղած հսյ ժողովրդի և հոգեորականութեան վրայ, մինչև որ Պարսկաստանի հետ մեր ունեցած գործերն աւելի լաւ ընթացք կըստանան»: Այսպէս ահա վճռեցաւ Եփրեմ արքեպիսկոպոսի կաթողիկոսանալու խնդիրը,—կրկնում ենք, ոչ Դանիէլի, Լազարեան իշխանի և Ներսիսի ու նրա միաբանակիցների խնդիրքների համաձայն, այլ համաձայն այն վոփոխութեան, որ տեղի ունեցաւ պարսիկ քաղաքականութեան մէջ էջմիածնի կաթողիկոսի անձի նկատմամբ:

Շփման մի բաց կէտ էր մնում միայն, որ էր այս:

Ուստաց համար ձեռնատու էր, որ Եփրեմ կաթողիկոսը առ ժամանակ Թիգվառում մնայ: Մինչդեռ պարսից համար ընդհակառակը, ձեռնատու էր, որ կաթողիկոսը շուտով իւր գահի վրայ լինի**):

*) Ակտե, հատոր III. էր. 83, № 155.

**) Ակտե, հատ. IV, էր. 176, № 258.

Ահա թէ ինչի համար:

Վերեւում ասել ենք, որ այդ դառն ժամանակներում ինչպէս Մայր Աթոռը նմանապէս և Արարատեան աշխարհի հայ ժողովուրդը թէ բարոյապէս և թէ տնտէսապէս քայլքայւած էր բոլորովին և ցաք ու ցրիւ եկած ամեն երկիր, առաւելապէս մօտակայ Վրաստանը:

Երկրի այդ աստիճան քայլքայւումը՝ հարկաւ խիստ վնաս էր Պարսկաստանին, որը և Դանիէլին աքսորից բերելով և հանդիսաւոր կերպով կաթողիկոսացնելով բացի այն, որ ուստաց սիրացն էր ուզում շահել, այլ և ցրիւ եկած հայ ժողովրդին՝ յուսալով, որ այդ ժողովուրդը իւր սիրելի Դանիէլի վերադառնալով՝ ինքն ևս կվերադառնայ և աւելւած ու ամայացած երկիրը կշենացնէ, կվարէ, կմշակէ:

Ժողովրդին գրաւելու միջոցներից մէկն է՝ բացի կաթողիկոսի անձնաւորութիւնից՝ պարսիկ կառավարութիւնը համարում էր նաև Մայր Աթոռի շնութիւնն ու պայծառութիւնը:

Ընթերցողին արդէն յայտնի է, որ այդ ժամանակ էջմիածինը իսպառ սպուռ զրկւած էր բոլոր հարսաւութիւնից, իւր բոլոր շարժական գոյքից, իւր զարդերից, որոնք իշխան Ցիցիանովը և յետոյ՝ ժեներալ Նէսվէտայեվը հետները Թիգվառ էին տարել,

Ընթերցողին յայտնի է և այն, որ երբ Դանիէլը զահ բարձրանալով խնդրեց, որ Վանքի

ապրանքը վերադարձնեն, — ինչպէս որ իշխան Յիշխանովը խոստացած էր, — Գուգովիչը մի անհան մասը և եթ վերադարձրեց:

Այս է ահա պատճառն, որ երբ պարսիկները տեսան թէ՝ Վրաստանի կառավարչապետը էջմիածնի պայծառութեան մասին չի էլ մտածում, — իրանք ևս միջամտեցան յանձին Երևանի Սարդարի:

Դանիէլի կենդանութեան ժամանակ, գուցէ և նրա խնդրանօք, Սարդարը մի նամակ ուղղեց Գուգովիչին:

Ծթ.

Նամակի բովանդակութիւնը այն է թէ՝ էջմիածնի վանքը, որ 1500 տարւայ մի պատկառելի հնութիւն է և «տեղի երկրպագութեան», «ոչ մի ժամանակ այսպիսի աւերածք չի եղած, ոյլ և այսպիսի խարաբ, ամայի թողուն լաւութիւն չունէր. և ձեր սպարապետի կամքն այն էր, որ Դանիէլ սրբազնն կաթողիկոս լինի, վասն այսու պատճառի Շահզադան ևս մեծագահ Դանիէլ կաթողիկոսին խալաթ և ֆերման կաթողիկոսութեան շնորհեալ և պատւով յղեալ էր յէջմիածին»:

«Մենք ևս ձեռնառու լեալ յղեցաք Աթոռն մեծ պատւով, նստաւ ի վերայ Աթոռոյն և վարէ զազգս իւր. բայց բազումք ի բնակչաց իւրոց՝ վարդապետքն, միաբանքն և ժողովուրդն փախստական եղեալ եկեալ են ի քաղաքդ (Թիֆլիդ): Եւ ի կողմանու Վրաստանու, որ այժմոյս

տեղդ են, ահա զբեմք և ազդ առնեմք, զի վասն կաթողիկոսութեան Դանիէլ սրբազնին գոհութիւն և փառք Աստուծոյ, այն՝ որ ձեր կամքն էր՝ կատարեցաւ՝ որ ըստ իւրոց կամաց գահ նստաւ:

Սակայն նորա շինութիւնն և պայծառութիւնն միաբան վարդապետօք և ույաթօք է. պարտի ձեր հրամանքն էլ Աթոռոյ շինութեան և պայծառութեան խաթեր համար և կաթողիկոսի բարէ անուն ստանալու համար հրաման անէք, որ այդ կողմերին մէկ մարդ մի յէջմիածնայ վարդապետաց, հարազատից, միաբանից և ուհաթիցն արգելումն յան, որ գան առաջուան նման, ամեն մարդ իր գործին վրայ հաստատ լինի, որ օրէ օր Աթոռն պայծառանայ: Եթէ երկու թագաւորաց մէջն սէր և հաշտութուն կինի և մեր և ձեր մէջն զանգանութիւն չկայ. շինութիւն և պայծառութիւն Աթոռոյն ձերն է: իսկ թէ՝ մի արասցէ Աստւածաշնամութիւն լինի, որ կողմն որ յաջողութիւն գտանի, Աթոռոն չէն և պայծառ պէտք է»:
«Եթէ հաշտութիւն լինի և թէ թշնամութիւն, բարին այն է, որ Աթոռն շէն և պայծառ լինի: Մէկ էլ էս՝ որ սոյն հազար հինգ հարիւր տարին տաճարն մինչև ի հիմայ այսպէս խարաբայ ամայի չէ եղած. միայն թէ, քոյդ ժամանակի լինելն, քոյդ անուան լոյեղ չէ. քանզի այս վատ անուն յավիտեանս յաւիտենից կմնայ»*):

*.) Դիւան, հատ. 6, էր. 625—628.

կ.

Կայսեր ուղարկած խնդիրների պատասխանը, — Եփրեմի կաթողիկոսացման մասին, — չստացած, Դանիէլը մեռնելով մեծ իրարանցման մէջ զրեց միաբանութեանը, որ Դաւթից մեծ երկիւղ էր կրում, նա մանաւանդ այն անպատճեթիւնից յիշոյ, որ բերին վահքում նրա զվահին, ծեծելով, ջարդելով և ի վերջոյ մօրուքը գերծելով:

Ուռա-պարսկական պատերազմը շարունակւում էր:

Կայսեր կողմից Եփրեմի հաստատւած լինելը, թէ և միաբանութիւնը լսած էր, բայց նրա որտեղ լինելը չգիտէր:

Միւս կողմից միաբանութիւնը տեսնում էր, որ Դաւթին ու իւր խնամի մէլլիք-Արքահամն ևս քնած չէին:

Ուստի միաբանութիւնը աճապարանքով դիմեց նախ՝ կառավարչապետին խնդրելով Եփրեմի հաստատւած լինելն Արքաս Միրզին յայտնել անյապաղ, երկրորդ՝ իւր կողմից ևս դիմեց պարսից գահաժառանգին նոյնպիսի խնդիրքով:

Արքաս Միրզան զրականորէն յայտնեց և միամտացրեց տագնապած միաբանութեանը, որ Դաւթի կաթողիկոսացման խնքն ևս հակառակ է: Ընդհակառակը նա ինքն էլ ցանկանում է Եփրեմին տեսնել հայրապետական գահի վրայ:

Եւ ի հաստատութիւն իւր խօսքին՝ Արքաս Միրզան իրան գիմողներին մի շատ սիրալիր

հրաւիրաթուղթ տւեց յանուն Եփրեմին, առաջարկելով, որ անյապաղ գայ և Մայր Աթոռին տէրութիւն անէ*):

Հարեւանցօրէն նկատենք, որ այդ ժամանակ Թաւիթն ևս Արքաս Միրզայի բանակը գալով, բողոքում և դատ էր պահանջում իւր և Ներսէս եպիսկոպոսի (Աշտարակեցի) մէջ: Սակայն գահաժառանգը, Դաւթի բողոքը արհամարհեց և քննութեամբ դտաւ, որ Ներսէսը իրը արգար է:

ԿԱ.

Արքաս Միրզի հրաւիրաթուղթը, Ներսէսի ազգական Ռէթէոս վարդապետի ձեռքով ուղարկւեց Եփրեմին իրան «Միւնօգոսի զրութեամբ»**):

1809 թւականի փետրւար ամսին Ռէթէոսը հասաւ Թիֆլիս և Գուգովիչից անցաթուղթ և պահապան զինուորներ ստանալով անցաւ Ուռարանան Եփրեմին որոնելու:

Այդ միջոցին ժանտախա կար: Եւ Ռէթէոսը ստիպւած եղաւ 30 օր կարանտին քաշել հիսկուսիին Կովկասում: Ուր ուրեմն վարդապետը հասաւ Աժգարիսան և այստեղ լսելով, որ կաթողիկոսը Ն.-Նախիջևանումն է, մեկնեցաւ այստեղ և վերջապէս յունիսի 12-ին դտաւ Եփրեմին և յանձնեց Արքաս Միրզայի հրաւիրաթուղթը:

Եփրեմն էլ, իւր հերթում, յայտնեց, որ իւր կաթողիկոսանալու մասին Ուռասաց կայսրը ևս իւր հաճութիւնը տւել է:

*) ԱԿՏԵ, հատ. IV, եր. 175, № 257.

**) «Միւնօգոսը» Դանիէլը հիմնածն էր: Դրա մասին, իւր տեղում, ընդպահակ կխօսւել:

Միայն նախ քան բարձրագոյն հրովարտակի տալն՝ կայսրը ցանկացել է, որ նոր կաթողիկոսը Պետերբուրգ գնայ իրան ներկայանալու։

Այս պատճառաւ՝ նոյն 1809 թւականի յունիսի 23-ին Եփրեմը Ռէթէոսին հետը վերցնելով՝ ճանապարհ ընկաւ դէպի Պետերբուրգ։

Դժբաղդաբար՝ որքան էջմիածնի միաբանութիւնը անհամբեր սպասում էր կաթողիկոսին՝ այնքան վերջինս ուշանում էր, ի հարկէ, իրանից անկախ պատճառաւ։

Ճանապարհին կաթողիկոսի «կառէթը» ջարդելով՝ նա հարկադրւած էր սպասել։

Վերջապէս յուլիսի 14-ին հասաւ Մօնկւայ։ Եւ մինչդեռ պատրաստւում էր ճանապարհ ընկնել դէպի կայսերանիստ մայրաքաղաքը՝ այնտեղից նամակ ստացաւ իշխան Լազարեանից, որ Մօնկւայում առ ժամանակ մի սպասէ, որովհետեւ, ըստ Լազարեանի, կաթողիկոսին յատկացրած բնակարանը դեռ պատրաստ չէր։

Վերջապէս օգոստոսի 1-ին, կաթողիկոսը Պետերբուրգ ժամանեց և իջևանեց Յովակիմ Լազարեանի տանը։

ԿԲ.

Մասնաւոր աղբիւրներից ստուգելով՝ որ Արքաս Միրգան իւր կաթողիկոսութիւնը հաստատել է Եփրեմը շնորհակալութեան թղթեր գրեց (1809 թ. մայիսի 13-ին) Նոր-Նախիջևանից թէ Երևանի խանին և թէ Արքաս Միրգին։ Թղթերի մէջ Եփրեմը, ի միջի այլոց, յայտ-

նում էր թէ խանին և թէ գահաժառանգին, որ երբ Ռէթէոս վարդապետը Նախիջևան հանի, —ինքը, կաթողիկոսը, անմիջապէս կը մեկնի իւր նոր պաշտօնավայրը՝ էջմիածն։

Սակայն ինչպէս ահսանք՝ կայսեր ցանկութեամբ նա գնաց Պետերբուրգ։

Կաթողիկոսը կայսրին ներկայացաւ օգոստոսի 20-ին իւր հետ ունենալով իրեւ թարգման Աղէքսանդր Մակարեան Խուզաբաշեանին, որ օտարագաւան դեպարտամենտի պաշտօնեալ էր և Պետերբուրգի Հայոց եկեղեցւոյ երեցփոխանը։ Մի և նոյն ժամանակ Խուզաբաշեանը՝ Եփրեմի ծանօթ անձնաւորութիւն էր՝ և նրա խնդրանօք Դանիէլ կաթողիկոսից օրհնութեան կոնդակ էր ստացել մի տարի առաջ։

Կայսրը կաթողիկոսին և նրա հետ եղող հոգևորականներին նախ ընդունեց առանց թարգմանի, յետոյ թարգմանով, յետոյ թարգմանին հեռացրին և մնացին կայսրը, կաթողիկոսը և նրա հետ եղողները, որոնք և ծնքաչոք աղօթեցին։

Ի վերջոյ մրգերով հիւրասիրւելով՝ պալատումը՝ կաթողիկոսը զարձաւ իւր իջևանը։

ԿԳ.

Մի քանի օրից յետոյ դուրս եկաւ կայսերական հրովարակը (1809 թ. Սեպտեմբերի 31-ին) յանուն Եփրեմին, հայ մելիքներին, իւղրաշիներին և առհասարակ յանուն հայ ազգին։ Կատարինէ Բ-ի նման՝ Աղէքսանդր Ա.

կայսրն էլ այս հրովարտակով Եփրեմին և նրա յաջորդներին ինքնաբերաբար ընդունում էր իւր խնամքի և բարձր հովանաւորութեան ներքոյ: Եւ բոլոր սուսահայերին ենթարկում է նոր կաթողիկոսի անմիջական իրաւասութեանը*):

Եփրեմը ստանալով իւր հաստատութեան հրովարտակը՝ Խաչվերացի կիւրակէ օրն կաթողիկոսական պատարագ մասուցեց հայոց եկեղեցումը: Ներկայ էին ինքը, կայսը, մինիստրները, աւագանին, միտրոպօլիտը, որոնք յետոյ հրաւիրւեցին Յովակիմ Լազարեանի տունը ճաշի:

Հրովարտակի հետ միասին՝ Եփրեմին շնորհւեցաւ և Աննայի առաջին աստիճանի շքանշանը**): աստղով և ժապաւէնով, դիպակեայ զգեստացու, ընտիր մահուտ, 5000 ըուբի ճանապարածախք, բացի սպասաւորներին տրւած 1500 ր.:

Գեկտեմբերի վերջերին կաթողիկոսը կայսեր իւր հրաժեշտութեան տալով՝ մեկնեցաւ Մօսկով, ուր դարձեալ մնաց առ ժամանակ մի:

Մօսկովյայց նա՝ մինիստրի յանձնարարական թղթով մի գեսպան, — Գրիգոր Վահրամեանց տնունով, — ուղարկեց պարսից Շահին, զահաժառանդին, Երևանի սարդարին, որոց յայտնելով իւր հաստատեն կայսրից՝ խոստանում էր շուտով մեկնել էջմիածին:

Մակայն այդ շուտովը ձգձգւեցաւ մինչև

*) ԱԿՏԵ, ՀԱՍՏՈՐ IV, ԿՊ. 173, № 254.

**) Եփրեմը մինչև այդ ժամանակ ստացել էր պնակէ և վեղարի լսաչ:

հետևեալ 1810 թւականի յույիս ամիսը, երբ կաթողիկոսը, վերջ ի վերջոյ, հաստ Թիֆլիսութայց այսաեղ էլ կառավարչապետ Տարմառովը, պատերազմը պատճառ բռնելով, թոյլ չըտեց, որ Եփրեմը էջմիածին դնայ:

ԿԴ.

Էնթերցովը պետք է զիտենայ, որ Եփրեմի ընտրութեան և հաստատութեան տարին (1809 — 1810) պատերազմ էր ոռւսաց և պարսից ու տաճկաց մէջ: Վերջին երկու ազգերը միացած էին ոռւսաց դէմ: Վրաստանում խլափիւններն և ներքին յուղամիններն անպակաս էին: Եւրոպայում էլ՝ Նապոլէօն Ա. ոչ պակաս հոգս էր պատճառում ոռւս կառավարութեանը:

Եւ ահա թէ՝ վերջինս ինչու այնքան շոյում ու փաղաքշում էր կաթողիկոսին:

Եւ հաստատում էր նրան՝ առանց սահկաց Սուլթանից նախապէս հաստատման ֆերման ձեռք բերելու, ինչպէս որ արել էր Յովակիի և Գանիիի ժամանակ, և ինչպէս որ սովորութիւն էր հայ ազգի մէջ, որոյ կաթողիկոսը, մինչև այդ ժամանակ, կարելի է ասել, միջազգային իրաւունք էր վայելում, որպիսի իրաւունքից չըրկելու համար էլ՝ Պօլոյ ազգայինները և պատրիարքը շուտով Սուլթանի կողմից ևս ֆէրման համեցին Եփրեմի անունով:

Կառավարչապետ Տարմառովը՝ թոյլ չտալով Եփրեմին Թիֆլիսից դուրս գալու՝ մի և նոր ժամանակ նրան խորհուրդ տւեց՝ Երևանի Հիւ-

սէին-Ղուլի խանին, որ իւր բանակով ռուսաց սահմանագլխի վրայ կանգնած էր, թուղթ գրել՝ հարցնելով թէ կարող է անվտանգ սահմանն անցնել և էջմիածին՝ իւր պաշտօնավայրը գնալ:

«Եթէ պարսից կառավարութիւնը, — այդ առթիւ Տարմասովը գրում էր մինհստրին, — կաթողիկոսին ընդունեց և նա կամեցաւ գնալ, ինձ համար այդ բանը յաւ առիթ կշիճի վերսկսել ընդհատւած բանակցութիւնը Արքաս Միուղի հետ՝ զինագագարման մասին»*):

Եփրեմի թղթին պատասխանել էր ինքը գահաժառանգը հետեւեալ գրութեամբ՝ «Յուսացէք մեր կատարեալ ողորմածութեան վրայ և մի մոռանաք, սրանից առաջ՝ Զերդ Բարձրաստիճանութիւնը հաղորդել էիք մեզ, թէ ժամանել էք Թիֆլիս և այդտեղից շուտով ճանապարհ կընկնէք էջմիածնի վանքը և բաւականութիւն կուտաք սպասող միաբանութեանը, Բայց այժմ բաւականին ժամանակ է անցել և Զերդ գալու մասին ոչինչ տեղեկութիւն չկայ: Եւ որովհետեւ Զերդ Բարձրաստիճանութեան համար՝ անվայել է իւր խոսմունից խախտել և վանքը թողնել այնպիսի անբարեկարգ և անպայծառ վիճակի մէջ, վասն որոյ Զերդ Բարձրաստիճանութիւնը՝ այլ ևս չպէտք է ուշացնէ այդպիսի բարի գործ կատարելը, այլ փութայ առանց յետաձգելու, որպէս զի Աստուծոյ հաճութեամբ մենք տեսակցինք Զեզ հետ»**):

*) Ակты, հատ. IV, էր. 174, № 256.

**) Ակты, հատ. IV, էր. 176, № 258.

ԿԵ.

Պարսից գահաժառանգի գրութիւնից յետոյ՝ Եփրեմ կաթողիկոսին այլ ևս անկարելի էր Թիֆլիսում մնալ, նա մահաւանդ որ՝ Արքաս Միրզան իւր պաշտօնեաներից երկուսին՝ իբրև իւր կողմից կաթողիկոսին հրաւերակ, մինչև Թիֆլիս էր ուղարկել:

Ուստի կաթողիկոսը իւր շքախմբով, որ բարկացած էր Դավթի երեսից էջմիածնից փախած արքեպիսկոպոսներից, մեկնեցաւ Թիֆլիսից՝ Տարասով կուսակալի նշանակած զինւորական պահնորդների ուղեկցութեամբ:

1810 թւականի հոկտեմբերի 5-ին մեր ճանապարհորդները ռուսաց սահմանն անցան, մըտան պարսից հողը՝ Արքանում, իրիկնապահին:

Հետեւեալ առաւտառուն՝ կաթողիկոսի կացարանի շուրջ հաւաքւած էր էջմիածնի միաբանութեան, հայ ժողովրդեան և պարսից իշխանութեան ներկայացուցչութիւնը, բարձրաստիճան հոգևորականներ, իշխաններ և պաշտօնեաներ:

Մի վաշտ զօրքի պաշտպանութեան տակ՝ այդ բազմութիւնը հոկտեմբերի 9-ին, Դանիէլ կաթողիկոսի մահւան երկրորդ տարեգարձի օրը, հասաւ էջմիածնին, ուր պատշաճաւոր աղօթք և մաղթանք կատարեց «վասն համօրէն կենդանաց և ննջեցելոց ագդի Հայոց»:

Սպա կաթողիկոսը ընդունեց պարսից Մարտագամի (Եպարքոս) ներկայացուցչին, որ իւր

մեծաւորի կողմից և նրա զբութեամբ էջմիա-
ծին էր եկել՝ վեհի գալուստը շնորհաւորելու:
ԿԶ.

Երկու օրից յետոյ՝ կաթողիկոսը իւր շքա-
խմբով այցելութիւն դնաց Աբբաս Միրզին, որ
մեծ բանակ էր զրել Խորվիրապի մօտ:

Ճանապարհին անդադար կաթողիկոսին ներ-
կայանում էին պարսիկ տէրութեան այլ և այլ
պաշտօնեաներ և ձիաւոր զինորներ և յարգանք
ու պատիւ մատուցանում:

Եւ այսպէս մեծ հանդիսով կաթողիկոսը
հոկտեմբերի 13-ին հասաւ բանակը:

Նրա իջևանելու տեղ պատրաստել էին
Սադրազամի վրանը՝ գահաժառանդի վրանի
հանդէպ՝ նրանից 10 քայլ հեռու, ուր և ճոխ,
«համադամ» ճաշ, մրգեղին և ըմպելի տւին
հիւրերին:

Հետեւալ օրը Աբբաս Միրզան իւր վրա-
նում ընդունեց կաթողիկոսին և նրան իւր կող-
քին նոտեցրեց:

Ապա, երբորդ օրը, սկսւեցաւ ընծաների
փոխարինութիւնը:

Եփրեմը գահաժառանդին նւիրեց «զԿարէթն
մեր և զոմանս իրս, գործս ճարտար Եւրոպաց-
ւոյ՝ և բազում ինչ»:

Հետեւալ օրն էլ՝ գահաժառանդը իւր ըն-
ծաները ուղարկեց «վասն մեր (կաթողիկոսին)
զչորս պատւական խիլայս, զերկուս դիպակեղէն
ագանելիս ըստ ծիսի պարսից, զգօտի ոսկեթել

ծանրագին, և զշալ՝ զոր սովորութիւն է կաթո-
ղիկոսաց իրու նշան յարգութեան պարգևել
պարսից՝ արկանել զպարանոցաւ՝ երկոքին ծայր-
քըն կախեալ զառաջեաւ մինչև ցթաթս ոտիցն:
Յղեաց (գահաժառանդն) և վասն եօթն պատու-
աւոր արքեպիսկոպոսացն՝ զմի մի ոսկեթել ա-
գանելիս և զշալս, ևս վասն տէր Մելքիսեդիկ
խաչակիր աւագ քահանայի Ղամազեանց զեր-
կուս սոկեթել ագանելիս»: «Ապա յղեալ վասն
մեր զմի երիվար և զկնի այնորիկ զնրովարտակն
վասն կաթողիկոսութեան մերոյ»*):

Այդ հրովարտակով գահաժառանդը հաստա-
տելով այն տմեն իրաւունքներն ու արտօնու-
թիւնները, որ պարսից նախնի թագաւորներն
շնորհել են հայոց կաթողիկոսին՝ իւր կողմից ևս
երկու նոր իրաւունք էր տալիս:

Մինչև այդ ժամանակ՝ հայոց կաթողիկոսը
երբ մի տեղ էր գնում, նրա առաջին մի թամ-
քած ձի էին տանում: Դա պարսկական արքու-
նիքի հին պարզեն էր:

Այժմ Աբբաս Միրզան իրաւունք է տալիս՝
կաթողիկոսի առաջին երկու ձի (եղէկ) տանել:

Բացի զբանից՝ Աբբաս Միրզան տարեկան
4000 ը. ոսճիկ նշանակեց Եփրեմի համար:

Եւ այսպէս պարզեաւրւած և փառաւորւած՝
հայոց կաթողիկոսը իւր շքախմբով վերադարձաւ
էջմիածին, ուր և նոյեմբերի 6-ին ու օծումն
ընդունեց:

*.) Ամենայն, Հայոց կաթողիկ, հատ. Ա, եր. 57.

ԿԵ.

Սակայն... նախ քան օծումը՝ կաթողիկոսից և էջմիածնի հոգևորական ժողովից կամ Սինոդից՝ գահաժառանգն երգումն պահանջեց՝ պարսից տէրութեանը հաւատարիմ մնալու և նրաշահերը պաշտպանելու:

Արբաս Միրզան իւր այս պահանջը հիմնում էր ոռւսաց այն սովորութեանը կամ օրէնքի վըրայ, որով բարձրաստիճան հոգևորականները՝ պաշտօնի մէջ մտնելուց առաջ՝ հաւատարմութեան երդում են տալիս տէրութեանը:

Պարսից խորագէտ գահաժառանգը՝ հայոց կաթողիկոսացուների կամ կաթողիկոսների հոգեբանութիւնը շատ լաւ ըմբռնել էր:

Նա լաւ տեսնում էր, որ ոռւսաց կառավարութիւնը այդ բարձրաստիճան հոգևորականներին՝ շքանշաններով, դրամական նւէրներով, կենսաթոշակներով, շքեղ ընդունելութիւններով և այն՝ միանգամայն իւր կողմը դրաւելով, մեծամեծ ծառայութիւններ է անել տալիս նրանց, յօդուտ իւր պետական շահերին:

Այդ՝ ինչի՞ նոյնը չանէ և պարսիկ տէրութիւնը, որի հէնց հաղատակներն էլ են լիշեալ բարձրաստիճան հայ հոգևորականները:

Եփրեմ կաթողիկոսը և սինօղականները իրանցից պահանջւած երդումը տվին պարսից կառավարութեանը:

Գահաժառանգի հէնց իրան ներկայութեամբ՝ նրանք երդեցան, իրանց երդումը մի

հին գրչագիր Աւետարանի մէջ գրելով և ստորագրելով:

Այդ Աւետարանը հետը վերցրած՝ Արբաս Միրզան մեկնեցաւ էջմիածնից իւր բանակատեղը:

Վերևում մենք ասել էինք, որ ոռւսաց կայսրը Եփրեմին և Անսայի առաջի աստիճանի շքանշան էր շնորհել:

Մինչև այդ ժամանակ պարսիկները շքանշան ասած բանդ չունեին:

Արբաս Միրզան Եփրեմ կաթողիկոսին առաջարկեց, որ ոռւսական կայսեր կողմից իրան արւած շքանշանը չկախէ, մինչև որ Շահի կողմից ևս իրան սահմանւած շքանշանը չստանայ: Եւ ապա երկուսը միասին կախէ:

Դա պարսից «Առիւծի և Արեգական» շքանշանն էր, որ հէնց այդ առթիւ առաջին անգամ պարսից իշխանութիւնը սահմանեց և գործածել սկսեց:

ԿԸ.

Պարսիկ գահաժառանգի՝ հայոց կաթողիկոսին ցոյց տւած վասաւոր ընդունելութիւնը, նրան արւած պարզեներն և արտօնութիւնն, նրան նշանակած ոռձիկն, նրան խոստացւած շքանշանը, վերջապէս նրանից և նրա գործակից հոգևորականներից ստացւած երդումն, — այս ամենը քաղաքականութեան համար՝ աննշան իրնդիրներ չեին: Չէր կարելի դրանց անուշաղիր թողնել:

Ուստի և կովկասի կառավարչապետ Տարմասովը անմիջապէս՝ նախարարին վեկուցեց այդ ամենը։ Ձեկուցագիրը վերջանում էր այս բառերով «Այս ամենը՝ առաջին օրինակն է և դրանից առաջ երեք չէ եղած և այդ իսկ պատճառում՝ արժէ առանձին ուշադրութիւն դարձնել այդ երդանց բուն նպատակն ընդունելու համար»*):

Տարմասովի վերջին քառերն ընդգծեցինք, որովհետեւ ամենից աւելի փառնպատորը՝ Եփրեմին և նրա գործակիցների տւած հաւասարմութեան երգումն էր առ պարսից Շահն։

Հայոց կաթողիկոսը և նրա արքեպիսկոպոսները կարող էին պարսից ընծաներին, նրանց փաղաքշանքներին նշանակութիւն չտալ, առաւել լաւ ընծաներ և պարզեներ ու նորանոր փաղաքշանքներ ուսուաց կողմից ստանալով՝ պարսիկներին զրժել, սակայն նրանք չէին կարող իրանց երգմանը զրժել։ Եւ եթէ զրժեին՝ անպատճ չէին կարող մնալ։

Ահա թէ ինչու համար՝ Աբբաս Միրզան՝ կաթողիկոսի երգումը Աւետարանի կողքին զրել աւեց և նրան վերցրեց իւր հետ։

Պատրաստւած որսը ձեռքից դուրս էր դալիս...

ԿԹ.

Պետերբուրգում եղած ժամանակը՝ Եփրեմը նախարարից (Ռումեանցով) խնդրած էր՝ որ

իշխան Յիցիանովի և Ժեներալ Նէպէտայեվի ձեռքով և. Էջմիածնից տարւած զարդերն և փողերն վերադարձնեին վանքին։

Կաթողիկոսի խնդիրը Ռումեանցովը հաղորդեց կովկասի կառավարչապետին՝ ի կատարումն։

Վերջինս իւր պատասխանի մէջ, կրկնելով ընթերցողին յայտնի այն հին երգն թէ՝ ինչպէս իշխան Յիցիանովը, նոյնակն և Ժեներալ Նէպէտայեվը՝ Էջմիածնի ապրանքն 1804 և 1805 թւականներում վերցրել են իրակ թէ միարանութեան խնդրանօք, յաւելացնում է, թէ այդ մասին Եփրեմը իրան ևս անձամբ և երկու անգամ խնդրել է։

Ուստի և ինքը, կառավարչապետը ևս կարծում է թէ՝ արդարեւ, վանքի սեպհականութիւնը ոլեաք է վերադարձնել, որպէս զի, — շարունակում է Տարմասովը, — նախ՝ հայերը չկարծեն, որ մենք (ուսները) իրանց վանքը կողովտելու մաքով էինք վերցրել յիշեալ զարդերն ու դրամները և երկրորդ՝ պարսիկները այդ բանը առիթ չհամարեն հայերի սիրաը մեզանից սառեցնելու։ Սակայն, — վերջացնում է կառավարչապետը իւր զեկուցագիրը, — որովհետեւ Յիցիանովի և Գուգովիչը զեկուցագրերից իւր ժամանակն՝ կայսեր քաջ յայտնի է վանքի սեպհականութեան այս պատմութիւնը, — ուստի և ինքը՝ առանց բարձրագոյն հրամանի չէ կարող վերադարձնել։

Հետևաբար Տարմասովը Ռումեանցովի միջնորդութիւնն էր խնդրում այս առթիւ թագաւոր կայսեր առաջ։

*) Ակտե, համար IV, Եր. 177, № 259.

Միջնորդութիւնը անելուց յետոյ՝ Ռումեանցովը պատեիրեց կառավարչապետին՝ վերադարձնել վանքի սեպհականութիւնը, բայց... շարունակում է նախարարը, — «Երէ պատրիարք կարողիկոսը հարկաւոր համարեց, որ յիշեալ գանձերը մեկանց յտեղափոխին եղմիածին, այլ մի մասն առ ժամանակ մնայ Թիֆլիսում, կարողիկոսի այդ խնդիրն էլ յարգեցեց»*):

Հ.

Նախարարի այս թղթի խմաստը՝ կառավարչապետը իսկոյն հասկացաւ։ Ռւստի և յարմար առիթ էր որոնում՝ վանքի սեպհականութեան վերադարձնելը նորից ձգձգելու։

Եւ առիթը ինքնիրան եկաւ։

Արբաս Միրզան առաջարկեց կաթողիկոսին՝ վանքի ունեցած չունեցածը ցուցակագրելու։

Թէ ինչ նպատակաւ, յայտնի չէ։

Թերեւս պարսից գահաժառանգը մտադիր էր վանքի ամենահարկաւոր զարդերն իւր հաշով ձեռք բերել. թերեւս իշխան Յիշխանովի և ժեներալ Նէսվէտայեվի արած կողոպուտը՝ ի գիր արձանացուցանել, ձևակերպել էր ուզում։ Եւ կամ մի այլ նպատակ։

Սակայն պարսից գահաժառանգի առաջարկութիւնը ինչ նպատակ էլ որ ունենար, — այդ նպատակը չէր կարող հիմք զառնալ Կովկասի կառավարչապետի ձեռքին՝ նոր ի նորոյ ձգձգելու։ Վանքի սեպհականութեան վերադարձուցումը։

*) ԱԿՏԵ, համ. IV, եր. 175, № 257.

Նոյն իսկ իւր նախկին գրութիւնում յայտնած մտքերի նկատմամբ հետեւղական լինելու համար՝ Տարմասովը պէտք է վերադարձնէր վանքի ապրանքը։

Սակայն... Տարմասովը, որպէս պաշտօնեայ, մի և նոյն ժամանակ, պարտաւոր էր նախարարի հրամանին հետեւել։

Ռւստի նա Ռումեանցովին պատասխանեց թէ՝ որովհետեւ Արբաս Միրզան առաջարկել է վանքի ապրանքը ցուցակագրելու, ուստի ինքը այդ ապրանքը էջմիածնին չի վերադարձնի, մինչ չև որ յսուզեց թէ՝ պարսից գահաժառանգը հելչ նպատակաւ ցուցակագրութիւն է պահանջում։

Եւ թէ՝ յիշեալ ապրանքի և դրամների էջմիածնին ուղարկելն՝ արգեօք կաթողիկոսի անձը կասկածի տակ չի ձգում պարսից կառավարութեան առաջ*):

ՀԱ.

Հնիթերցովը Տարմասովի այս առղերի մէջ թող ուրիշ բան չպառէ, բացի զիպլօմատիկական բառախաղութիւննից։

Տարմասով կառավարչապետի այն երկու գրութիւններից, որ նա ուղղել է Ռումեանցովին, մի բան միայն լրց է ընկնում։

Իւր տեղում մենք ասել ենք, որ Թիֆլիսում Յիշխանովի հրամանաւ կազմւած ցուցակում փողի անուն չկայ։

Մինչդեռ Տարմասովը իւր գրութիւններում

*) ԱԿՏԵ, համ. IV, եր. 177, № 259.

փողի անուն էլ է տավիս, դրամ «ի պահեստ ար-
ութիւնի գանձարանին»:

Վանքի փողերն վերցնողը՝ ժեներալ Նէսվե-
տայեմին էր, որի գէմ եղած բազմաթիւ տրատունջ
ու բողոքներից հարկագրւած՝ իշխան Յիշիանովը
ժեներալից բացատրութիւն էր պահանջել:

Նէսվետայեմին բացատրութիւն տւեց, որը
Յիշիանովը ուղարկեց Յովհաննէս արքեպիսկո-
պոսին, —Թիֆլիսի առաջնորդին, —իւր հետեւեալ
զրութեամբ՝ «ընկալայ ես բազօրթ և զիր ի
ժեներալ մայիօր Նէսվետայեմին յաղագս արդա-
րացուցանելոյ իւրոյ ի զրպարտուրենէ. և առ
քեզ ուղարկեցի զգիրն այն, զոր թարգմանեալ
տեսանէք, որպէս և ես տեսի. որ պարտաւորքն
ձեր արժիերքն են և ոչ նա (Նէսվետայեմի),
և առաւել այն, ով որ 15 ամէ նա ինձ ձա-
նայէ և ես զիտեմ զնա, որ ոչ սիրէ զօգուտ ինչ
(շահասէր չէ), վասն այսորիկ կարող էք դատել
զարգարութիւն նորա. ի բազօրթին զրէ նա
(Նէսվետայեմին), որ սուտ պատրիարքն Դաւիթ
գարձեալ է ի Էջմիածին, կալեալ է՝ խաչ, մա-
ստնք և աղ նիւթքն և կայքն և տոեալ է ի
նմանէ Մէհմէթի Ղուլի խանն»*):

—Հապա այն ի՞նչ փողեր են, որոնք, ըստ
Տարմատովի, տրւած են արքունի գանձարանին
ի պահեստ:

Անցնենք մէր քաղւածքներին.

ՀԲ.

Եփրեմ կաթողիկոսի առաջին գործն եղաւ՝
հասաւատել իւր հօտի մէջ այն խաղաղութիւնը,
որ Դաւիթ-Դանիէլեան շփոթների պատճառաւ,
վերցրել էր տասը տարուց ի վեր:

Դաւիթը տակաւին կենդանի էր, և ինչպէս
տեսանք, չափազանց վիրաւորելով Ներսիսի
արարմունքից՝ քաշւել էր երևան իր եղբօր տունը:

Նա տեսնում էր, որ Դանիէլին իւր ձեռքն
առնող, նրա վրայ բռնացող Ներսէսը, — Նա, որ
ստիպեց Գանիէլին երևանի սարդարին առաջ վր-
կայել իր թէ՝ Դաւիթին ծեծել տւողն ու մօրու-
քը գերծել տւողս ինքը, կաթողիկոսն է եղել,
այլ ոչ Ներսէսը, որ միմիայն այդ կերպով, և
և սարդարին մեծ կաշառք տալով հազիւ հազ
պատասխանութիւնից ազատւեցաւ, — գոյն այդ
Ներսէսը այժմ էլ Եփրեմին է ձեռք առել:

Բնական է ուրեմն, որ Դաւիթը՝ եթէ ոչ
կաթողիկոսութիւնը նորից ձեռք բերելու նպա-
տակից՝ զոնէ անձնապաշտպանութեան զգաց-
մունքից թելագրւած՝ աշխատէր երևանի սար-
դարին իւր կողմն ունենար: Եւ հարկաւոր գէպ-
քում նրա պաշտպանութեանը, նրա աջակցու-
թեանը դիմել:

Եփրեմը այդ բանն հասկանում էր, ուստի
և աճապարեց Դաւիթին հաշտեցնել Մայր Աթոռի
և նրա կահակալի հետ, մի յատուկ «գաշնա-
դրութեամբ», որ հաստատած է երկու կաթո-
ղիկոսների և 7 արքեպիսկոպոսների ստորա-
գրութեամբ:

*) Դիւան, գիրք եր., 452—453.

Այդ դաշնադրութեամբ՝ էջմիածինը Դաւ-
թին պէտք է վճարէր՝

1) ամեն տարի 150 թուման Երևանու կէ-
յար գրամ, որ անում է 2250 օսմանեան դուռուշ:

2) Քսան սօմար ցորեն, քսան լիտր բբինձ,
եօթն լիտր ուտիքւայ իւղ, հինգ լիտր շիրվաղտ
իւղ, հարիւր լիտր միո, ատան լիտր ոսպ, հինգ
լիտր սիսեռ, հինգ լիտր բակլայ, երեսուն լիտր
սոխ, յիսուն լիտր գինի, հինգ լիտր արաղ և
երկու ծառայ իրանց սոճիկներովն ու շորերովը:

3) Մի ձեռք զգեստ էլ Դաւթին՝ իրան:

4) Դաւթիթը իրաւունք ստացաւ ապրել
Վանքում, կամ Երևանում և ուղած ժամանակ
շրջագայել Երևանի սահմանում եղած ամեն մի
վանքում և գիւղում:

5) Եթէ նա կամեցաւ առաջնորդական կամ
նուիրակութեան պաշտօնով գնալ մի այլ վիճակ,
—թոյլտութիւն պիտի տրւէր իրան:

6) Վերջին դէպքում վանքը այլ ևս չէր
պարտասրւում վճարել նրա ոռճիկը, հանդերձը
և սննդեան վերոյիշեալ նիւթերը:

7) Դաշնադրութիւնը բոլորովին իւր ոյժը
կըկորցնէր, եթէ որ Դաւթիթը առանց կաթողի-
կոսի և ս. Ժողովի (Սինօդի) հաճութեան «ձըգ-
տեսցի ինքն գնալ ըստ հաճոյս իւր յանվայելուշ
դատեցեալ տեղի իմն»*):


Դաւթիթը այս դաշնադրութեանը բոլորովին
հաւատարիմ մնաց և միանգամայն ձեռք քաշե-
լով իւր անձնական հաշիւներից՝ հաշուեց իւր
դրութեան հետ: Եւ բոլորովին խաղաղ ու ա-
ռանձնացած կեանք էր վարում: Նա ապրում էր
երեմն Երևանում, եղբօր տանը և երբեմն էջ-
միածնում, ուր և կնքեց իւր մահկանացուն
1817 թւականի հոկտեմբերի 30-ին և մարդուն
ցաւ ո, Գայիանէի վանքում:



*.) Ամենայն Հայոց Կաթողիկ. հատ. Ա, եր. 60—61.







6891